

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՕՐՊՈՒՄՆԸ ՈՒՆԵԱԼ, ՀԱՅԱՍՏԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ
ՀՈՒՄԱՆԻՏԱՑՔԵԼԱՂԱՅԵԼԻ ԳՐՔԵՐ:

ԹՎՈՅՆ ԳՐՔԵՐԻ ՄՇԵՂՈՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀՈՅՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՆ՝

www.freebooks.am

ԸՆԴՐՉԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՆ:
ՑԱՆՎՈՒՆՈՒՄ ԵՒՔ ՉԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԻՔ ՄԵՔ՝ freebooks@rambler.ru

ՖՐԻԴՐԻՆ ՆԻՑՇԷ.



ԱՅՍՊԷՍ ԽՕՍԵՑ ԶՐԱԴԱՅՏԸ

ՄԻ ԳԻՐԻ ԲՈՂՈՐԻ Ե ՈՉ ՈՒԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ 1990

ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑՇԷ.

ԱՅՍՊԵՍ ԽՕՍԵՑ ԶՐԱԴԱՇՏԸ

ՄԻ ԳԻՐ-Ք ԲՈՂՈՐԻ Լ ՈՉ ՈՔԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԿԵՐՄԱՆԵՐԷՆԻՑ ԽՈՐԳՄԱՆԵՑ

Վ. ԽՈՐԷՆԻ.

ԿԵՐԻՍ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՎԱԴԱՔԱՌԱՄ

Գ Է Ո Ր Գ Ի Ս ՍՈՒՐՔ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(† 5-ին յուլ. 1914 թ. Բաղու.).

Խարգմանիչը.

ՓՐ. ՈՒՇՇԷ.

ТАКЪ ГОВОРИЛЪ ЗАРАТУСТРА

переводъ съ нѣмецкаго В. ХОРЕНИ

Б А К У

Типографія газеты „Баку“

1 9 1 4.

ՀԱՐԳԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂ

Գիրքը, որ ներկայացվում է քո ուշադրությանը, հրատարակվել է Անձի սոցիալական պաշտպանության հորհրդային շրջանային ֆոնդի «Հույս» հրատարակչության կողմից:

Մենք հույսով ենք, որ նա հնարավորություն կրնա ձեռնի ոչ միայն մայրենի լեզվով ծանոթանալ հեղինակի և նրա ստեղծագործության հետ, այլև ձեռք բերելով այն, անձնական մուծում կատարել վերահիշյալ ֆոնդին:

«Հույս» հրատարակչության խորհուրդ

հեղինակի, նրա սանդղազործության և բարգմանչի մասին

Փիլիսոփա, բանասեր ու բանաստեղծ, իւացիոնալիզմի և վոլյունտարիզմի ներկայացուցիչ Ֆրիդրիխ Նիցշեն ծնվել է 1844 թվականի հոկտեմբերի 15-ին, Լյուտցենի (Սաքսոնիա) մոտ գտնվող Ռեկկենում՝ կաթուղի հոգևորականի ընտանիքում: 1864 թ. ավարտելով Շուլպֆորտի հայտնի դպրոցը, նա կրթությունը շարունակում է նախ Բադելի, ապա Լայպցիգի համալսարանում, որանդ էլ, առանց որևէ քննության ու դիսերտացիայի, նրան շնորհվում է դոկտորի գիտական աստիճան: 1869 թվականին 25-ամյա Նիցշեն հրավիրվում է Բադելի համալսարան՝ դասական բանասիրության պրոֆեսորի պաշտոնում աշխատելու: 1876 թվականից սկսվում է վասանալ նրա ինքնազգացողությունը և 1879 թվականին նա ստիպված թողնում է գիտա-դասախոսական գործունեությունը: Սակայն, հետագայում առողջության լավացման պրոցեսը անսպասելի և ընդմիջտ ընդհատվում է: 1889 թվականին Նիցշեն արդեն հոգեկան հիվանդ էր: Նա փախճանվեց Վայմարում՝ 1900 թվականի օգոստոսի 25-ին:

Բանասիրությունից դեպի փիլիսոփայություն, — ահա ստեղծագործական այն ուղին, որն անցել է Նիցշեն՝ այդ «գերմանացի մոայլ հանճարը» (Ա. Ռյոկ): Կրելով Արթուր Շոպենհաուերի և Թիխարդ Վագների ազդեցությունը, նա կյանքը մերժող փիլիսոփայությունից գնաց դեպի կյանքը հասատող փիլիսոփայություն, «բանալանության կործանումից» դեպի «մեծ բանականություն»:

Նիցշեի փիլիսոփայության առանձնահատկություններից մեկն էլ ընդգծված հակասականությունն է: Հեաազոտելով կեցության և մշակույթի երևույթները, նա բացահայտում է քաղաքականության ու իրավունքի քարոչականության ու կրոնի մասին եղած կեղծ բարեպաշտական, քաղքենիական պատկերացումները և նախադրյալներ է ստեղծում զաղափարական նախապաշարմունքների մերկացման համար: Ճշակնք, բուրժուական զաղափարական նախապաշարմունքների:

Սակայն, նրա քննադատությունը շատ է հեռու ֆրանսիական մեծ լուսավորիչների, առավել ևս Մարքսի «գերմանական զաղափարախոսության» քննադատությունից:

Նիցշեի փիլիսոփայությունը ինչպես քրիստոնեական բարոյականության, այնպես էլ հումանիստական, դեմոկրատական ավանդույթների ու սոցիալիստական հայացքների ժխտման փիլիսոփայություն է:

Ազատության նկատմամբ սերը, իրավահավասարությունը, արդարությունը, ճշմարտությունը, այս բոլորը Նիցշեի կարծիքով «իշխելու կամքի գիմակավորված աարաանսակներ» են, որի հիմքը ինքնահասատման համար ամեն մի կենդանի էակի ներհատուկ ձգտումն է: Նիցշեի փիլիսոփայությունը ուժեղ, ամենակարող, ընտրյալի փիլիսոփայությունն է, գերմարդու փիլիսոփայություն, որը գտնվում է բարու ու չարի այն կողմում: Չնայած ինքը կյանքում եղել է երկչոտ, վեհերոտ ու ինքնամոտի մարդ, որը առապում էր չհասկացվածությունից ու մեհակությունից:

Մարդիկ հավասար չեն և չեն էլ կարող հավասար լինել, առաջադիմությունը ուժեղների գործն է, թույլը մեռնում է և պետք է մեռնի: Կնոջ կոչումը սերն է, երեխաների, գերմարդու ծննդարերումը:— հաստատում է Նիցշեն:

Երկար ընդմիջումից հետո հայ ընթերցողին է ներկայացվում «Այսպես խոսեց Զրադաշտը» ստեղծագործությունը, որը հեղինակը գրել է 1883-84 թվականներին:

Նիցշե-Զրադաշտը չի ճանաչում և չի բնդունում կարեկցանքն ու պարտությունը, նա գանձում է, որ կյանքը դաժան է և անողոր: Դրա հետ մեկանել, նա կոչ է անում սիրել կյանքը, բայց սիրել նրանում ուժեղն ու հորը: Գերմարդ,— ահա կյանքի բարձրագույն նպատակը: Զրադաշտը հենց Նիցշեի գերմարդն է, ճշմարտության համար պայքարող մարտիկի խորհրդանիշը, նրա ներաշխարհի իղևալը: Զրադաշտը դա «ապագայի մարդրն է»: որը ետևում է թողել ժամանակաշրջանն իր արատներով ու կեղծիքներով: նա մարդկության մեծ դաստիարակն է: Զրադաշտը հենց ինքը՝ Նիցշեն է:

Սակայն ինչու ստեղծագործության հերոսը անվանվել է Զրադաշտ: Ըստ Նիցշեի, պատմության մեջ քիչ չեն «գերմարդու» նախաախպերը, հատկապես՝ Արևելքում: նա հրապուրված էր Պարսկաստանով և դրա համար էլ որպես իր մտքի արտահայտիչ ընտրեց հին իրանական կրոնի բարեփոխիչ ու մարգարե Զրադուշտրային (մ. թ. ա. 6-րդ դար), որը Ավեստայում՝ զարոստրիզմի սուրբ գրքում, ներկայացվում է դեռի դեմ պայքարող գիցարանական մարտիկի տեսքով:

Պետք է նշել, որ Նիցշեի փիլիսոփայությունն ընդհանրապես սասանում, ձեռք է բերում զիցարանության, առասպելի և քանասանդժական սանդժագործության արտահայտություն: Այն կառուցվում է որպես բեկորների, հաստվածների կամ էլ աֆորիզմների մի շղթա, որը իմաստով չի դասավորվում սի համակարգում, այլ ներկայանում է որպես բազմանշանակ խորհրդանիշ: Նիցշեի փիլիսոփայությունը նկատելի ազդեցություն է թողել փիլիսոփայական մտքի տարբեր ուղղությունների ու գաղափարական հոսանքների վրա, այդ թվում՝ պրագմատիզմի ու էկզիսանցիալիզմի, հեղափոխական սինդիկալիզմի ու ապարտոյական ազգայնամոլության: նրա ուժեղ անհատի՝ «գերմարդու» պաշտանմունքը, բարոյականության ժխտումը, իշխելու կոմքը և այլ գաղափարները ոգտագործեցին նաև գերմանական ֆաշիզմի գաղափարախոսները:

Մեծ է Նիցշեի ազդեցությունը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբների շատ գրողների վրա: նրա հայացքների առանձին ասորների կարելի է հանդիպել նաև հայ այնպիսի գրողների ստեղծագործություններում, ինչպիսիք են Ավետիք Իսահակյանը և Վրթանես Փափազյանը: նրանով հրապուրված էր նաև լայացիզմի համաշխարհային պամամ-փիլիսոփայական ֆակուլտետի շրջանավարտ, դաշնակցական կուսակցության գործիչ, հայ իրակա-նության մեջ Նիցշեի առաջին թարգմանիչ Վահան Խորենին:

Այսքանը: Իսկ այժմ խոս ք ընթերցողինն է:

Վ. ՏՈՒՐՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների
բեկնածու

ԶՐԱԴԱՇՏԻ ՆԱԽԱԲԱՆԸ . . .

1.

Երբ Զրագաշտը երեսուն տարեկան էր՝ թողեց իւր հայրենիքն ու հայրենի լիճը և գնաց լեռները։ Այստեղ վայելեց նա իւր ու իւր ոգու մենակութիւնը ու տասն ասորի դրանից չձանձրացաւ։ Վերջապէս փոխւեց նրա սիրտը՝— և մի առաւօտ արթնացաւ նա արշալոյսին, կանգնեց արևի առաջ և խօսեց այսպէս։

«Ի՞նչ, մեծ լուսատու. ի՞նչ կլինէր քո երջանկութիւնը, եթէ դու չունենայիր նրանց, որոնց գուլուսաւորում ես։

Տաս տարի է, դալիս ես գէպի իմ քարտնձաւը։ դու կձանձրանայիր քո լոյսից ու ճանապարհից առանց ինձ, իմ արծւի ու իմ օձի։

Բայց մենք սպասում էինք քեզ ամեն առւտօա, վերցնում էինք քո աւելցուկը ու օրհնում քեզ։

Տես, ես ձանձրացել եմ իմ իմաստութիւնից, ինչպէս մեղուն, որ շատ մեղր է հաւաքել՝ ես կարիք եմ զգում ձեռների, որ ձգւեն գէպի ինձ։

Ես ուզում եմ բաշխել ու պարգևել՝ մինչ մարդկայից իմաստունները կուրախանան իրենց յիմարութեամբ և տղքատները— իրենց հարստութեամբ։

Դրա համար ես պէտք է գէպի խորքերն իջնեմ՝ որպէս, դու երեկոյեան, երբ ծովի ետևն ևս անց-

նում և լոյս բերում ստորին աշխարհին, ով գեր հարձուստ լուսատու:

Ես պէտք է քեզ նման ընկնեմ, «մայր մանեմ որպէս անւանում են այդ մարդիկ, դէպի որոնց մօտ գնալ եմ կտմենում:

Ուրեմն՝ օրհնիր ինձ, գու խտրադ ակն, որ առանց նախանձի նաև տմենամեծ երջանկութիւնը տեսնել կարող է:

Օրհնիր այն բաժակը, որ լեցւել, յորդացել է, որ շուրջ ոսկեղէն հոսէ. նրանից և ամենուրեք ք երանութեան փայլը տանի:

Տես. այս բաժակը նորից դադարկւել և Ջրագաշտը նորից մարդ գառնալ է ուզում»:

— Այսպէս սկսեց Ջրագաշտի էջը:

2.

Ջրագաշտը իջաւ մենակ լեռնից և ոչ ոք հան դիպեց նրան: Իսկ երբ նա անտառները մտաւ՝ յան կարծ մի ծերուկ կտնգնեց նրա առաջ, որը թոզել էր իր սուրբ հիւզը՝ անաատում արմտիքներ փրն տրելու համար: Ու այսպէս խօսեց ծերուկը Ջրագաշտի հետ.

«Օտար չէ ինձ այս տաբաղիրը. մի քանի տարի առաջ անցաւ նա այտտեղից: Ջրագաշտ էր կոչւում նա. բայց նա կերպտրանափոխւել է:

Այն ժամանակ գու քո մոխիրն էիր կրում դեպի լեռը. այսօր քո հմէրն ես կամենում հովիտները տանել. չե՞ս վտխենում հրգեհտածիզի պաաիժներից:

Այո, ես հանաչում եմ Ջրագաշտին: Ձինջ

Նրա աչքը և գարշանքից ազատ նրա բերանը: Իոկ նա այնպէս է քայլում ասեռ պարսղ լինի:

Կերպարանափոխւած է Ջրադաշտը, մանուկ է դարձել Ջրադաշտը, արթնացած մէկն է Ջրադաշտը. ի՞նչ ես կամենում արդ քնածնների մօտ:

Որպէս ծովում էիր ապրում գու մենակութեան մէջ. և ծովը կրում էր քեզ: Վայ քեզ, դձու ցամաք ես սւգում իջնել: Վայ քեզ, դձու կամենում ես նորից ինքդ կրել քո մարմինը»:

Ջրադաշտը պատասխանեց. «ես սիրում եմ մարդկանց»:

«Ինչո՞ւ, տասց սուրբը, գնացի ես անառ և մենաստան. միթէ ոչ նրա համար, որ ես մարդկանց շատ-շատ էի սիրում»:

Այժմ սիրում ե՛մ Ասածուն. մարդկանց ես չեմ սիրում: Մարդը ինձ համար շատ անկատար բան է: Իէպի մարդը ասածած սէրը կսպանէր ինձ»:

Ջրադաշտը պատասխանեց, «Ի՞նչ ասացի սիրոյ մասին. ես մի նւէր եմ բերում մարդկանց»:

«Նրանց ոչինչ մի տուր, ասաց սուրբը: Աւելի շուտ նրանց բեռից մի բան վերցրո՛ւ և տա՛ր նրանց հետ—այս նրանց համար տմենալու բանը կլինի, եթէ միայն այդ քեզ հսճոյք է պատճառում»:

Եւ եթէ նրանց բան ես ուզում տալ՝ ողորմութիւնից աւելի ոչինչ ՚ի տուր, և գեռ թող առաջ մուրտն այգ»:

«Ո՛չ, պտտասխանեց Ջրադաշտը, ես ողորմութիւն չեմ տալիս: Ես այնքան էլ աղքատ չեմ դրա համար»:

Սուրբը ծիծաղեց Ջրադաշտի վրայ և այսպէս խօսեց. «Իէ տես՝ թէ ինչպէս նրանք կընդունեն քո

գտնածերը. նրանք անվստահ են դէպի մենակեացն ուր
և չեն հաւատում, որ մենք նւիրելու համար ենք
գալիս:

Մեր քայլերը նրանց համար շատ են մենակ ու
կամաց հնչում: Եւ երբ նրանք գիշերով, արևը ծա-
գելուց առաջ, իրենց անկողիններում քայլերի ձայն
են լսում՝ անտարակոյս հարցնում են նրանք իրենց.
Ո՞ւր է գնում այս գողը:

Մի գնտ մարդկանց մօտ և մնաւ անառում:
Աւելի շուտ կենդանիների մօտ գնաւ: Ինչո՞ւ չես կա-
մենում լինել՝ որպէս ես—արջերի հետ արջ, թռչուն-
ների հետ թռչուն»:

«Իսկ ի՞նչ է, անում սուրբը անտառում», հար-
չրեց Ջրագաշտը:

Սուրբը պատասխանեց. «Ես երգեր եմ յօրինում
ու երգում և երբ ես երգեր եմ յօրինում՝ լսլիս և
մըմռում եմ ես. այսպէս եմ փառաբանում ես Աստ-
ծուն:

Երգելով, լալով, ծիծաղելով և մըմռալով եմ ես
փառաբանում Աստծուն, որ իմ Աստուածն է: Սա-
կայն ի՞նչ նոր նւէր ես բերում դու մեզ»:

Երբ Ջրագաշտը այս երգերը լսել էր՝ ողջունեց
նա սրբին և ասաց. «Ի՞նչ ունեմ ձեզ ասլու. լաւ է,
թողէք, շտապով հեռանամ ձեզնից, որ ձեզնից ոչինչ
չտունեմ»:—Եւ այսպէս հեռացան նրանք իրարից,
ծերուկն ու այն մարդը, ծիծաղելով որպէս երկու
մանուկներ ծիծաղել գիտեն:

Երբ սակայն Ջրագաշտը մենակ էր՝ այսպէս ա-
սաց ինքն իր սրտում. «Միթէ հնարաւոր բան է
այս ծերուկ սուրբը դեռ չի լսել իր անտառում, որ
Աստուած մեռել է»:

3.

Երբ Ջրագաշար մօտակայ քաղաքն եկաւ, որ
անտառների կողքին է, շատ ժողովուրդ գտաւ նա
հաւաքւած շուկայում. տրդէն յայտարարւած էր, որ
մի լարախաղ պիտի տեսնեն: Եւ Ջրագաշար այսպէս
խօսեց ժողովրդի հետ:

Ես քարոզում եմ ձեզ գերմարդի մասին: Մտքս
մի բան է, որ պէտք է յաղթահարւի: Ի՞նչ էք արել
նրան յաղթահարելու համար: Բոլոր տրարածները
իրենց գերազանցող մի բան են ստեղծել. և դուք
ուզում էք տեղաաւուրթիւնը լինել այս մեծ յորձան-
քի և աւելի սիրով դէպի կենդանին ետ գնալ, քան
մարդին յաղթահարել:

Ի՞նչ է կապիկը մարդի համար. հեգնանքի մի
քրքիջ կամ ցաւագին ամօթ: Նոյնը պիտ լինի և մար-
դը գերմարդի համար. հեգնանքի քրքիջ կամ ցաւա-
գին ամօթ:

Իուք անցել էք որդից մինչև մարդը ճանապար-
հը. և շատ բան ձեր մէջ գեռ որդ է: Կապիկներ էիք
երբեմն և այժմ էլ դեռ՝ մարդը աւելի է կապիկ՝
քան որևէ կապիկ:

Սակայն ձեզնից ամենախիմաստունն անգամ,
նա էլ մի երկպառակ ու երկսեռ էակ է—բոյսի և
ուրւականի մէջ: Բայց ինչ հրամայեմ ձեզ լինել—
ուրւակտններ՝ թէ բոյսեր:

Տեսէք, գերմարդն եմ քարոզում ես ձեզ:

Գերմարդն է երկրի Թող ասի ձեր կամքը.
գերմարդը լինի երկրի

Երգւեցնում եմ ձեզ, եղբայրներ, հաւատարիմ

մնացէ՛ք երկրին և մի հաւատաք նրանց, որոնք ձեզ հետ երկնային յոյսերից են խօսում, թունաւորիչներ են գրանք, գիտակցում են՝ թէ ոչ:

Կեանքը արհամարհողներ են, մեւնողներ և իրենք էլ թունաւորւածներ, որոնցից ծանձրացել է երկիրը, ուրեմն բարի երթ գրանց:

Երբեմն Աստու զէ՛մ յանցանքը ամենամեծ յանցանքն էր, բայց Ասաւած մեռաւ և նշա հետ մեռան և այո յանցագործները: Երկրի զէ՛մ յանցանք դործելը այժմ ամենասոսկալին է և անքննելիի ներքինը տւելի յարգելը՝ քան երկրի իմաստը:

Երբեմն հողին արհամարհանքով էր նայում մարմնին, և այն ժամանակ արհամարհանքը ամենաբարձր բանն էր. նա կամենում էր, որ մարմինը լինի նիհար, տգեղ, քաղցից հալ ու մաշ: Այգալիսով, կտրծում էր, նա հեշտութեամբ կազաւի նրա և երկրի կտպանքներից:

Օ՛, այդ հողին ինքն էլ դեռ շտա էր նիհար, տգեղ ու հալ ու մաշ, և անզթութիւնը հաճոյքն էր այդ հողու:

Բայց դուք էլ գեռ, իմ եղբայրներ, ասացէք ինձ. ի՞նչ է տսում ձեր մարմինը ձեր հողու մասին. մի՞թէ ձեր հողին էլ դեռ աղքատութիւն ու աղտութիւն չէ և մի ողորմելի գոհ նակութիւն:

Ճշմարիտ եմ ասում, մարդս մի կեղտոտ հոսանք է. ծով պէտք է լինել մի կեղտոտ հոսանք իր մէջ ընդունելու առանց կեղտաւելու:

Տեոէք, գերմարդն եմ ձեզ քարոզում. դա այս ծոփն է. դրա մէջ կարող է ձեր մեծ արհամարհանքը ուղւել:

Ի՞նչ է ամենամեծ բանը, որ դուք ապրել կա-

բող էք: Դա մեծ արհամարհանքի ժամն է. այն ժամը, երբ ձեր երջանկութիւնը ձեզ համար զգւելի կդառնայ, և նայնպէս ձեր բանականութիւնն ու ձեր առաքինութիւնը:

Այն ժամը, երբ դուք կասէք. «Ի՞նչ է իմ երջանկութիւնը. դա աղքատութիւն է և կեղտոտութիւն և մի թշւառ փափկասիրութիւն: Իսկ իմ երջանկութիւնը պէտք է գոյութիւնն արդարացնէր!» Այն ժամը, երբ դուք կասէք. «Ի՞նչ է իմ բանականութիւնը. փափազում է դա գիտութեան, որպէս առիւծը իր կերակուրը. դա աղքատութիւն է և կեղտոտութիւն և մի թշւառ փափկասիրութիւն»!

Այն ժամը, երբ դուք կասէք. «Ի՞նչ է իմ առաքինութիւնը. դեռ ևս դա ինձ չի կատաղեցրել: Որքան ևս ձանձրացել ես իմ բարի և չար լինելուց. ամեն ինչ աղքատութիւն է ու կեղտոտութիւն և ողորմելի փափկասիրութիւն»!

Այն ժամը, երբ դուք կասէք. «Ի՞նչ է իմ արդարութիւնը. ես չեմ տեսնում, որ ես բոց ու ածուխ լինէի. իսկ արդարը բոց է և ածուխ»!

Այն ժամը, երբ դուք կասէք. «Ի՞նչ է իմ կարեկցութիւնը. կարեկցութիւնը այն խաչը չէ՞, որի վրայ խաչուում է նա, ով սիրում է մարդկանց. իսկ իմ կարեկցութիւնը խաչելութիւնն չէ»!

Խօսել էք երբ և է այսպէս. աղաղակէ՛ք էք երբ և է այդպէս. սի՛խ, եթէ միայն լսէի ձեզ այդպէս աղաղակելիս!

Ո՛չ ձեր մեղքը—ձեր սակաւապետութիւնն է դէպ' երկինք աղաղակում, ձեր ազահութիւնն է ձեր մեղքի մէջ դէպ' երկինք աղաղակում!

Ո՛ւր է այն կայծակը, որ լիզէր ձեզ իր լեզուով.

Ար է այն խենթութիւնը, որով դուք պէտք է պատ-
ւասուէք!

Տեսէք գերմարդն եմ քարոզում եմ ձեզ. նա է
այդ կայծակը, նա է այդ խենթութիւնը!

Երբ Ջրագաշտը այսպէս խօսեց, գոչեց մէկը
ամբոխի միջից. «Մենք բաւականին խեցինք լարտ-
խաղի մասին, թողէք, որ հիմա տեսնենք նրան»:

Եւ բոլոր ժողովուրդը ծիծաղեց Ջրագաշտի վը-
րայ: Լարտխաղը սակայն, որը կարծեց՝ թէ խօսքը իր
մասին է, իր բանին անցաւ:

4.

Ջրագաշտը սակայն նայեց ժողովրդին և գար-
մացաւ: Ապա այսպէս խօսեց նա:

Մարգս մի լար է—կապւած կենդանու և դեր-
մարդի միջև,—անդունդի վրայ ձգւած մի լար...

Մարգս մեծ է նրանով, որ նա կամուրջ է և ոչ
նպատակ. ինչի համար կարելի է մարգին սիրել՝ այդ
այն է, որ նա անցումն է և անկումն:

Ես սիրում եմ նրանց, որոնք ապրել չգիտեն—
լինեն դրանք ընկնողներ, որովհետև դրանք անցնող-
ներ են:

Ես սիրում եմ մեծ արհամարհողներին, որովհե-
տև նրանք ամենամեծ յարգողներն են և միւս տփի
կարօտի նեւերը:

Սիրում եմ նրանց, որոնք տատերի ետև հիմք
չեն որոնում ընկնելու և գոհւելու համար. այլ գոհ-
ւում են երկրին, որ մի օր երկիրը դերմարդինը
դառնայ:

Սիրում եմ նրան, որը ապրում է, որպէսզի ճա-

նաչի, և որը ճանաչել է կամենում, որպէսզի մի օր դերմարդը ապրի: Եւ դրանով նա իր անկումն է ուղում:

Միրում եմ նրան, որ տշխատում է և հնարում, որ դերմարդի առւնը շինի, և նրա համար երկիր, կենդանի և բոյս նախապատարաստում. որովհետեւ գրանով նա իր անկումն է կամենում:

Միրում եմ նրան, ով սիրում է իր առաքինութիւնը, որովհետեւ առաքինութիւնը անկման կամքն է և կարօտի նետը:

Միրում եմ նրան, որը ոչ մի կաթիլ ոգի չի պահում իր համար, այլ ամբողջովին իր առաքինութեան ոգին է ուղում լինել. այդպէս քայլում է նա իբրև ոգի կամուրջի վրայով:

Միրում եմ նրան, ով իր առաքինութիւնը իր հակումն ու ճակատագիրն է գարծնում. գրանով ուղում է նա իր առաքինութեան համար դեռ տարել և այլ ևս չ'ապրել:

Միրում եմ նրան, որ շատ առաքինութիւններ չի կամենում: Մէկ առաքինութիւնը աւելի շատ առաքինութիւն է քան երկուսը, որովհետեւ զաւելի հանդոյց է, որից ճակատագիրն է կախում:

Միրում եմ նրան, որի հողին շոտյում է իրեն, որ շնորհակալութիւն չէ կամենում և ետ չէ դարձնում, որ նւիրում է և պահել չէ ուղում:

Միրում եմ նրան, որ ամաչում է, երբ բախտի խաղը նրան երջանկութիւն է խոստանում, և հարցնում է. միթէ ես վատ խաղացող եմ. — որովհետեւ նա խորտակել է կամենում:

Միրում եմ նրան, ով իր դործերից առաջ ոսկէ խօսքեր է տսում և միշտ աւելին կատարում, քան

խոտանում է, որովհետեւ նա իր անկումն է կամենում:

Միրում եմ նրան, եւ յարգարայնում է գալիք սերնդի դայաթիւնը և անցածներին փրկում, որովհետեւ ներկայ սերնդի նեա մեռնել է կամենում:

Միրում եմ նրան, սի կըթում է իր Աստուծոն, որովհետեւ նա սիրում է իր Աստուծոն, որովհետեւ իր Աստուծո բարկութիւնը պիտի սպանի նրան:

Միրում եմ նրան, որի հոգին խորն է նաև վիրտուրում ժամին, և որի կեանքը մի փոքր սաղրամից խորատկել կարող է, այսպէս անցնում է նա սիրով կամուրջից:

Միրում եմ նրան, որի հոգին լի է այնչափ, որ նա մտանում է ինքն իրեն, և բոլոր իրերը նրա մէջ են. այսպիսով բոլոր իրերը նրա խորատկման պատճառ կլինեն:

Միրում եմ նրան, սի ազատ ոգի և ազատ սիրտ ունի, դրանով նրա գլուխը իր սրտի փորտախիջն է դառնում, նրա սիրտը սակայն մղում է նրան գէպի անկումն:

Միրում եմ բոլոր նրանց, որոնք ծանր կաթիլների են նման, որ ընկնում են կաթիլ-կաթիլ այն մութ ամպից, որ կախած է մարդու վրայ. նրանք աւետում են կայծակի գայլ և խորատակում իբրև աւետայններ:

Տեւէր, ես աւետողն եմ կայծակի և մի ծանր կաթիլը այդ ամպից և այդ կայծակը կոչում է — գեւմարդ:

5.

Երբ Զրադաշար այս խօսքերը ասաց՝ տեսաւ նա

նորից ժողովրդին և լուսց. «առնա կանգնել են նրանք, ասաց իր սրտում, և ծիծաղում են. նրանք ինձ չեն հասկանում. այս ականջների յարմար բերանը չեմ ես:

Պէտք է փշրել գրանց ականջները, որ աչքերով լսել սովորեն. պէտք է ազմկել թմբուկների և ապաշխարանքի քարոզիչների նման. թէ՛ գրանք միայն թոթովողներին են հաւատում:

Արանք մի բան ունեն, որով այնքան հաւարտ են. ինչպէս են անւանում այդ, որ գրանց այդքան հպարտացնում է. «կլիթութիւն» են այդ անւանում և գրանով տարբերում այժարածներից:

Դրա համար էլ սիրով չեն լսում «Արհամարհանք» խօսքը իրենց մասին: Սօսեմ յօդուտ իրենց հպարտութեան:

Սօսեմ ամենաարհամարհելի մասին. իսկ դա վերջին մարդն է:

Ե՛ւ այսպէս խօսեց Ջրադաշտը ժողովրդի հետ.

Ժամանակ է, որ մարդս իր նպտաակը դնի: Ժամանակ է, որ մարդս իր դերտղոյն յոյսի սաղմը տնկի...

Վայ. կդայ այն ժամանակը, երբ մարդը իր կարօտի նետը մարդի վրայից չի նձտի և իր տղեղի լարը այլ ևս չի հնչի:

Ասում եմ ձեզ, պէտք է դեռ քաօս ունենալ իր մէջ մի պարող տաղ ծնելու համար. ես ասում եմ ձեզ, գուք դեռ քաօս ունէք ձեր մէջ:

Վայ. գալիս է ժամանակը, երբ մարդ այլ ևս ոչ մի տաղ չի ծնի: Վայ. գալիս է ամենատրհամարհելի մարդի ժամանակը, որը ինքը իրեն այլ ևս տրհամարհել չի կարող.

Տեսէք. ես ձեզ ցոյց եմ տալիս վերջին մարդին:

Ի՞նչ է սէրը: Ի՞նչ է ստեղծագործութիւնը: Ի՞նչ է կարօտը: Ի՞նչ է տատը—հարցնում է վերջին մարդը և աչքերը սեղմում:

Երկիրը կփոքրանայ և դրա վրայ կոստոսաի վերջին մարդը, որ տմեն ինչ կմանրացնի: Նրա ցեղը տնջնջելի է, ինչպէս երկրի լուն: Վերջին մարդը ամենից երկար է տպրում:

«Մենք դաեւ ենք երջանկութիւնը»—ասում են վերջին մարդիկ և աչքերը սեղմում:

Նրանք թողել են այն երկիրները, որ ապրելու համար կաշտ էր ու բոխ, որովհետեւ մարդ ջերմութեան կտրիք է զգում, մարդ սիրում է գեռ իր հարևանին և քսւում նրան, որովհետեւ մարդ ջերմութեան կտրիք է զգում:

Հիւանդանոցն ու անվտանգութիւն տածելը մեղք են համարում նրանք. զգուշաւոր և ուշիմ քայլերով են անցնում նրանք. յիմար պէտք է լինել քարերի և մարդկանց վրայից սայթաքելու համար:

Մերթ ընդ մերթ մի քիչ թոյն—հաճելի երազներ է տեոնում մարդ: Եւ վերջում շատ թոյն—հաճելի մտհւան համար:

Մարդիկ գեռ աշխատում են, որովհետեւ աշխատանքը լաւ ժամանց է: Բայց և հոգ են տանում, որ աշխատանքը չյոգնեցնի:

Մարդ ոչ տղքատանում է, ոչ էլ հարստանում. երկուսն էլ աւելորդ դժխացուանք են: Ո՞վ է կամենում գեռ կառավարել: Ո՞վ է ուզում հպտատկել: Երկուսն էլ—դատարկ մտահողութիւն:

Ո՞չ մի հովիւ և մի հօտ: Իւրաքանչիւրը նոյնն է կամենում, իւրաքանչիւրը հոււատար է. ո՞վ այլ բան է կամենում՝ կամաւոր կերպով գժտաուն է դնում:

«Երբեմն ողջ աշխարհը մոլորւած էր» — առում են տգնիւնները և աչքերը դո՛՛ նակութիւնից սեղմում:

Մարդիկ խելօքացել են և ամեն ինչ գիտեն, ինչ որ կատարւել է. ուստի և անվերջ ծաղրում են: Մարդիկ դեռ կաւում են, ըայց և իսկոյն հաշտում — ալլապէս կփշացնեն իրենց ստամոքսը:

Մարդիկ իրենց հաճոյքն ունեն դիշերը և իրենց հաճոյքը ցերեկը. ըայց յարգում են և առողջութիւնը:

«Մենք գտել ենք երջանկութիւնը» — ասում են վերջին մարդիկ և աչքները սեղմում:

Այստեղ վերջացաւ Զրադաշտի առաջին ճտուր, որ նաև «նախաբան» է կոչւում. որովհետև այստեղ ընդհատեց նրան ամբոխի աղմուկն ու բերկրանքը. «Տուր մեզ այս վերջին մարդին, սի Զրադաշտ, — այսպէս գոչեցին նրանք — դարձրու մեզ այդ վերջին մարդը, և մենք կտանք քեզ գերմարդին» . — Եւ ողջ ժողովուրդը ցնծում էր ու ձայն հանում լեզուով: Զրադաշտը սաչայն տխրեց և ասաց իր սրտում:

«Նրանք ինձ չեն հասկանում. իմ բերանը այս ականջների համար չէ:

Շատ եմ տպրել լեռների վրայ և երկար ականջ գրել առւակներին ու ծառերին. արդ կխօսեմ նրանց հետ այժարածների նման:

Անդորր է իմ հողին և պայծառ որպէս լեռները միջօրէին: Սակայն նրանք կարծում են, ես ստուն եմ և վատ կատակներով ծաղրող:

Եւ այժմ նայում են նրանք ինձ ու խնդում և խնդարով առում են ինձ: Մտոյց կայ նրանց ծիծաղի մէջ:

6.

Բայց այդ պահին մի բան պատահեց, որից պապանձւեցին բոլոր բերանները և սառան բոլորի աչքերը. մինչև այդ լարախաղը սկսել էր իր գործը. նա գուրս էր եկել մի փոքրիկ գոնից և դնում էր լարի վրայով, որ կապւած էր երկու աշաարակների միջև այնպէս, որ այդ կախւած էր շուկայի և ժողովրդի վրայ: Երբ սակայն նա իր ճանապարհի կէսին հասաւ՝ նորից բացեց փոքրիկ դուռը և խայտաճամուկ հողուստով մէկը՝ որպէս մի խեղկատակ՝ դուրս ցաակեց և արագ քայլերով գնաց առաջնի յետևից: «Յառաջ, կաղ դև, գոչեց նրա սոսկալի ձայնը, յառաջ ծոյլ կենդանի, գեղնազէմ, գողունի մաքսանենդ, որ կրունկովս քեզ խախտ չտամ: Ի՞նչ ես անում այստեղ աշաարակների միջև: Քո տեղը աշաարակն է, այնտեղ պէտք է քեզ ընտարկել, որ քեզնից լաւի ճանապարհը չկտրես»: Եւ հետզհետէ մօտենում էր նրան. բայց երբ մի քայլ էր մնացել, որ հասնէր նրան՝ կատարեց մի սոսկալի բռն, որից պապանձւեցին բոլոր բերանները և սառան բոլորի աչքերը. — Նա սատանայական մի ճիչ արձակեց և ցատկեց նրա վրայից, որը կտրել էր իր ճանապարհը: Իսկ այս վերջինը, երբ տեսաւ թէ ինչպէս իր տխոյեանը յաղթանակեց, չորցրեց գլուխն ու լարը. նա դէն ձգեց իր ձեռի փայտը և սրանից էլ արագ գլխապտոյտ ցած գլուրեց: Շուկան և ժողովուրդը նման էր հողմահար ծովի. ամեն ինչ իրարով տնցաւ և գլխաւորապէս այնտեղ, ուր մարմինը պիտի ընկնէր:

Զրագաշարը սակայն մնաց կանգնած, և հենց նրա կողքին ընկաւ մարմինը ջարդուփշուր ու այրանդակ, բայց դեռ կենդանի: Քիչ ժամանակից յետոյ ջարդուածը ուշքի եկաւ և տեսաւ, որ Զրագաշարը չոքում էր իր կողքին: «Ի՞նչ ես ստում, ասաց նա, ես վաղուց գիտէի, որ սատանան ոտք պիտի ձգի ինձ: Այժմ նա ինձ դէպի դժոխք է քարշ տալիս. նրան տրդելէլ ես կամենում»:

«Երդուում եմ իմ պատուով, բարեկամ, պատասխանեց Զրագաշար, այդպիսի բան չկայ, ինչ որ դու ես ասում, չկայ ոչ դժոխք, ոչ էլ սատանայ: Քո հոգին աւելի շուտ պիտի մեռնի քան քո մարմինը. էլ ոչնչից մի վախենար»:

Այդ մարդը շատ կասկածոտ նայեց նրան: «Եթէ դու ճշմարիտ ես ասում, ասաց նա, ես ոչինչ չեմ կորցնի, երբ ես կեանքս կորցնեմ: Ես աւելին չեմ քան մի կենդանի, որին սովորեցրել են պարել հարուածներով և փոքրիկ պտտառններով»:

«Ո՛չ, այդպէս չէ, ասաց Զրագաշար. դու վտանգաւոր մի արհեստ ես սովորել և այդ երբէք էլ արհամարհելի չէ: Եւ այժմ խորտակում ես կեանքդ դրա համար. ուստի և ես ուզում եմ թաղել քեզ իմ ձեռներով»:

Երբ Զրագաշարը այս ասել էր, մեռնողը այլ ևս չարտասխանեց: Բայց նա շարժեց ձեռքը՝ ասես Զրագաշարի ձեռքն էր որոնում շնորհակալութեան համար:—

ւեց խաւարի մէջ. ժողովուրդն էլ ցրւեց, որովհետև հետաքրքրութիւնն ու սարսափն էլ են յոգնում: Զրադաշտը սակայն նստած էր մեռելի մօտ գետնի վրայ, խորասուզւած մաքերի մէջ, այսպէս նա մտադաւ ժամանակը: Վերջապէս գիշեր եղաւ, և մի սառն քամի փչեց մենակների վրայից: Ու Զրադաշտը կանգնեց և այսպէս խօսեց իր սրտում.

«Ճշմարիտ, մի գեղեցիկ որս կատարեց այսօր՝ Զրադաշտը. ոչ մի մարդ չորսաց նա, բայց մի դիակ:

Մտակալի է մարդկային կեանքը և դեռ առանց իմաստի. խեղկատակի մէկը կարող է նրա համար ճակատագրական լինել:

Ես կամենում եմ մարդկանց իրենց գոյութեան իմաստը սովերեցնել, այդ գերմարդն է—մարդ կոչւած մութ ամպի կայծակը:

Բայց դեռ հեռու եմ նրանցից, և իմ սիրտը չի խօսում նրանց սրտերի հետ: Մարդկանց համար ես դեռ խեղկատակի և դիակի միջև գանձող մի արարած եմ:

Մութ է գիշերը, մութ են և Զրադաշտի ճանապարհները: Արի, դու, սառն ու կարծր ընկեր, տանեմ քեզ այնտեղ, ուր ես քեզ իմ ձեռներով կըթաղեմ»:

8.

Երբ Զրադաշտը այս ստաց իր սրտում, վերցրեց նա դիակը իր մէջքին և ճանապարհ ընկաւ: Եւ դեռ հարիւր քայլ չէր անցել՝ մի մարդ գողունի մօտեցաւ նրան և շնչաց ականջին—և այդ մարդը աշաարակի խեղկատակն էր: «Հեռացիր այս քաղաքից,

Զրագաշտ, ասաց նա. այստեղ քեզ շատերն են
ատում: Ատում են քեզ արդարներն ու բարիները և
նրանք քեզ իրենց թշնամին ու արհամարհողն են հա-
մարում. ատում են քեզ և ուղղափառ հաւատացողները
և քեզ տմբոխի վտանգն են համարում: Քո բախտից
էր, որ ծիծաղեցին քո վրայ. և իրօք, դու խեղկա-
տակի նման ես խօսում: Քո բախտից էր, որ դու
մեռած շանը ընկերացար. նրանով, որ դու քեզ այդ-
պէս ստորացրիր՝ փրկեցիր կեանքդ այսօր: Բայց
դնձ, հեռացիր այս քաղաքից—կամ թէ վաղը կցաա-
կեմ ես քո վրայից՝ որպէս կենդանի մէկը մեռեալի
վրայից»: Եւ երբ նա այս ասաց՝ չքացաւ: Զրագաշտը
սակայն քայլեց մութ և նեղ փողոցներով:

Քաղաքի գոանը պատահեցին նրան գերեզմանա-
փորերը. նրանք լուսաւորեցին ջահով նրա դէմքը,
ճանաչեցին Զրագաշտին և շատ ծաղրեցին նրան:
«Զրագաշտը մի մեռած շուն է տանում. կեցցէ, որ
Զրագաշտը գերեզմանափոր է գարձել. իսկ մեր ձեռ-
ները շատ են մաքուր այս տապալկածի համար: Մի-
թէ կամենում է Զրագաշտը սատանայի պատառը ձե-
ռից խլել: Շնա լաւ: Եւ բարի ախորժակ: Եթէ մի-
այն սատանան աւելի լաւ գող չէ՝ քան Զրագաշտը:
Նա կգողանայ երկսիգ, նա կուտի երկսիգ»: Եւ նը-
րանք ծիծաղեցին միասին:

Զրագաշտը ոչինչ չասաց և դնաց իր ճանա-
պարհը: Երբ նա երկու ժամ գնացել էր՝ անտառնե-
րի և ճահիճների մօտով այնքան լսեց քաղցած գայ-
լերի ոռնոցը, որ ինքն էլ քաղցեց: Վերջապէս կան-
գնեց նա մի մենակ ասն առաջ, ուր լոյս կար:

«Քաղցը միանգամից տանջում է ինձ, ասաց
Զրագաշտը. անտառների ու ճահիճների մէջ քաղց
զգացի և այն էլ կէս գիշերին»:

Շատ տարօրինակ քմահաճոյքներ ունի իմ քաղցր՝
«Յաճախ նա միայն ճաշից յետոյ է գալիս, և այսօր
ամբողջ օրը չզգացի. ուր էր մնացել»:

Այս ասելով Ջրագաշտը ծեծեց տան գուռը: Մի
ծերուկ մարդ գուռս եկաւ. նրա ձեռին լոյս կար, և
նա հարցրեց. «Ո՞վ է գալիս իմ մօտ իմ վատ քնի
ժամանակ»:

«Մի կենդանի և մի մեռեալ, ասաց Ջրագաշտը.
ինձ ուտելու և խմելու բան տէք, ես մոռացայ այդ
ցերեկը: Նա, ով քաղցածին կեւակրում է՝ դովացնում
է իր սիրտը. այսպէս է խօսում իմաստութիւնը»:

Ծերուկը դնաց ներս, բայց նորից ետ եկաւ և
Ջրագաշտին հաց և դինի առաջարկեց. «Քաղցած-
ների համար մի շար երկիր է այս. դրա համար էլ
այստեղ եմ ես ապրում: Մարդ թէ անասունը գալիս
են ճգնաւորիս մօտ: Աստ, որ քո ընկերն էլ ուտի,
նա քեզնից քաղցած է ու յոգնած»: Ջրագաշտը պա-
տասխանեց. «Մեռած է ընկերս, հազիւ թէ կարողա-
նամ այդ հասկացնել նրան»: «Այդ ինձ չի վերա-
բերում, ասաց ծերուկը քրթմնջալով. ով ծեծում է
իմ գուռը, պէտք է բնդունի, ինչ ես առաջարկում
եմ նրան: Անուշ արէք և օղջ մնացէք»:

Իրանից յետոյ Ջրագաշտը երկու ժամ էլ դնաց՝
վստահ իր ճանապարհին և աստղերի լոյսին. որով-
հետեւ նա շատ վարժ էր գիշերւայ ճանապարհորդու-
թեան և սիրում էր բոլոր քնածների երեսին նայել:
Բայց երբ այդը բացւեց՝ Ջրագաշտը իրեն մի մութ
անտառում գտաւ. և ոչ մի ճանապարհ էլ չէր ե-
րևում: Եւ նա դրեց մեռեալին մի փշակ ծառի մէջ
իր գլխավերջը—որովհետեւ նա դայլերից պաշտպան-
ւել էր կամենում—և ինքը նստեց գետնին մամուռի

վրայ: Եւ շուտով նա քուն մտաւ, յոգնած մարմնով,
բայց անդորր հողով:

9.

Երկտր քնեց Ջրագաշտը և ոչ միայն արշալոյսը
անցաւ նրա դէմքից, այլ և կէսօրը: Վերջապէս բաց-
ւեց նրա աչքը, դարմացած տեսաւ Ջրագաշտը ան-
տառն ու անդորրութիւնը և դարմացած հայեց
իր ներսը: Ապա արագ կանգնեց որսկէս մի նաւորդ,
որ միանդամից ցամաք է տեսնում, և ցնծաց. որով-
հետեւ նա մի նոր ճշմարտութիւն իմացաւ: Եւ այս-
պէս խօսեց իր սրտում.

Մի լոյս բացւեց ինձ համար. ընկերների կարիք
ունեմ ես և կենդանի ընկերների,— ոչ մեռած ընկեր-
ների ու դիակների, որոնց քարշ տամ, ուր ուզեմ:

Այլ կենդանի ընկերների կարիք ունեմ ես, որոնք
ինձ հետեւն, որովհետեւ իրենք իրենց հետեւել են ու-
զում— և այնտեղ, ուր ես եմ կամենում:

Մի լոյս բացւեց ինձ համար. ժողովրդի հետ
չպիտի խօսի Ջրագաշտը, այլ ընկերների! Ջրագաշտը
չպէտք է հօտի հովիւն ու շունը լինի!

Շատերին հօտից դրաւելու համար եմ եկել.
Թող ինձ վրայ զայրանան ժողովուրդն ու հօտը. հս-
վիւններին աւագակ է ուզում դարձնել Ջրագաշտը:

Հովիւներ եմ ստում ես, իսկ իրենք իրենց բա-
րի ու արդար են անւանում: Հովիւներ եմ ասում
եւս, իսկ իրենք իրենց հաւատացողներ են անւանում
ճշմարիտ հաւատի:

Տես այդ բարիներին ու արգարներին! Ո՞ւր են
ամենից շատ ասում գրանք. նրան, որ փշրում է

իրենց արժէքի տախտակները, փշրողին, յանցաւորին — den Brecher, den Verbrecher.— դա է սակայն ստեղծագործողը:

Տես բոլոր հաւատների հաւաասացողներին! Ո՞ւմ են ամենից շատ ատում. նրան նվ փշրում է: Իրենց արժէքի տախտակները, խորտակողին, յանցագործին — den Brecher, den Verbrecher.— դա է սակայն ստեղծագործողը:

Ընկերներ է որոնում ստեղծագործողը և ոչ զիակներ, ոչ խակ հօտեր և հաւատացողներ: Համաստեղծողներ է որոնում ստեղծագործողը, նրանց, որոնք նոր արժէքներ են գրում նոր տախտակների վրայ:

Ընկերներ է որոնում—ստեղծագործողներ և հնձողներ. որովհետև ամեն ինչ նրա մօտ հասուն է հնձի: Սակայն նա կարիք ունի հարիւր մանգաղների. և նա պոկում է հասկերը ու վրդովւում:

Ընկերներ է որոնում ստեղծագործողը և այնպիսիներին, որոնք իրենց մանգաղները սրել գիտեն: Ոչնչադողներ կանւանեն նրանց և արհամարհողներ բարու և շարի: Սակայն հնձողներն ու տօնողներն են դրանք:

Համաստեղծողներ է որոնում Զրադաշտը, իր հետ հնձողներ և տօնողներ է որոնում Զրադաշտը. ինչ գործ ունի նա հօտերի, նախիրների և զիակների հետ!

Ե՛ւ դու, իմ առաջին ընկեր, մնաս բարև. լաւ թաղեցի ես քեզ քո գատարկ ծառի մէջ, լաւ թաքցրի ես քեզ գայլերից: Բայց ես պիտ բաժանուեմ քեզնից, ժամանակը անցել է: Արշալոյսից մինչև արշալոյս ինձ համար մի նոր ճշմարտութիւն բացուեց:

Հովիւ չեմ ուզում լինել, ոչ էլ գերեզմանափոր. չեմ էլ ուզում խօսել ժողովրդի հետ. վերջին անգամ մի մեռեալի հետ խօսեցի:

Ստեղծագործողի, հնձողի, տօնողի հետ եմ ուզում ընկերանալ. ծիածանն եմ ուզում ցոյց տալ նրանց և բոլոր աստիճանները դերմարդի:

Ճգնաւորներին ես իմ երգը կերպեմ և ով դեռ ականջ ունի շլուած բաների համար իմ երջանկով թեամբ կձանրացնեմ նրա սիրտը:

Դէպի իմ նպատակն եմ ձգտում ես, իմ ճանապարհն եմ ես գնում: Տատանւողների և անհազների վրայից կցատկեմ: Եւ իմ անցումը կլինի նրանց անկումը:

10.

Այս խօսքերն ասաց իր սրտում Զրազաշար, երբ արևը կանդնեց կէսօրին. նա հարցական նայեց բարձունքին — որովհետև իր գլխավերևը մի թռչունի սուր կանչը լսեց: Եւ տես. մի արծիւ էր սաւառնում մեծ շրջաններով օդի մէջ, և նրանից մի օձ էր կախւած, ոչ որպէս որս, այլ՝ որպէս ընկեր. որովհետև սա մնացել էր նրա վզից փաթաթւած:

«Սրանք իմ կենդանիներն են», ասաց Զրազաշար և ուրախացաւ սրտանց:

Ամենահպարտ կենդանին արևի տակ և ամենախելօք կենդանին արևի տակ — նրանք դուրս են եկել լուր բերելու:

Տեղեկանալ են կամենում, արդեօք, ապրում է դեռ Զրազաշար. իրօք, ապրում եմ ես դեռ:

Աւելի վտանգաւոր գտայ մարդկանց մէջ ապրե-

լը՝ քան կենդանիների, վտանգաւոր ճանապարհներ է գնում Ջրագաշտը: Թող ինձ առաջնորդեն իմ կենդանիները:

Երբ Ջրագաշտը այս ասաց՝ նրա միտն ընկան անասուի սրբի խօսքերը, հառաչեց ու այսպէս խօսեց իր սրտում:

«Երանի թէ աւելի խելօք լինէի, շատ և շատ խելօք, որպէս իմ օձը:

Բայց մի անկարելի բան եմ կամենում ես. գոնէ թող իմ հպարտութիւնը իմ խելօքութեան հետ գնայ:

Եւ եթէ մի օր իմ խելօքութիւնը ինձ թողնի—
անխ, սա սիրում է թռչել-փախչել—թող իմ հպարտութիւնը իմ խելութեան հետ թռչի»:

— Այսպէս սկսեց Ջրագաշտի անկումը:

ԶՐԱԴԱՇՏԻ ՃԱՌԵՐԸ

ԵՐԵՔ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Երեք կերպարանափոխութիւնների մասին պիտի խօսեմ ձեզ հետ. թէ ինչպէս է ուղա դառնում ողին, և ուղար—առիւծ և ի վերջոյ՝ առիւծը—մանուկ:

Ոգու համար ծանր բաներ շատ կան, հզօր, կրելու ունակ ոգու համար, որին յատուկ է ակնածանքը—աւելի ծանր և ծանրադոյն բաներ է ցանկանում նրա ուժը:

Ի՞նչն է ծանր, այսպէս է հարցնում կրելու ունակ ողին. այսպէս է ծունկ չողում նա՝ ուղտի նման՝ և լուռ բարձել է կամենում:

Ո՞րն է ամենածանր բանը, դուք հերոսներ, այսպէս է հարցնում կրելու ունակ ողին, որ այդ իմ վրայ վերցնեմ և ուրախանամ իմ հզօրութեամբ:

Այդ այն չէ—ցածացնել իր անձը իր մեծածառութեան ցաւ պատճառելու համար, իր յիմարութիւնը վաշլեցնել՝ իր իմաստութիւնը ծաղրելու համար:

Թէ՛ այդ այս է. իմացութեան կազիններով ու խոտով սնել և յանուն ճշմարտութեան քաղցե՛լ հոգով:

Թէ՛ այդ այս է. հիւանդ լինել և մխիթարողներին տուն ուղարկել, աղաւնիների հետ ընկերութիւն անել, որ երբէք չեն լսում թէ դու ինչ ես ցանկանում:

Թէ՛ այդ այս է. կեղտոտ ջուրը մտնել, եթէ այդ ճշմարտութեան ջուրն է, և սառն շորտերն սւ տաք կրիաները քեզնից չեն խուսափում:

Թէ՛ այդ այս է. սիրել նրանց, ..ը արհամարհում են մեզ, և ձեռք պարզել այն ուրւականին, որ մեզ վախեցնել է կամենում:

Այս շուրջ ծանր բաները իր վրայ է վերցնում կրող ոգին՝ նման ուղտին, որ ծանրաբեռն անապատ է գիմում, շապում է և նա դէպի իր անապատը:

Մենակ անապատում սակայն երկրորդ կերպարանափոխութիւնն է կատարում. առիւծ է դառնում այստեղ ոգին, ազատութիւն է խլել ուզում և տէր դառնալ իր սեփական անապատին:

Իր վերջին տիրոջն է փնտրում նա այստեղ— թշնամանալ նրա և իր վերջին Աստծու հետ և յաղթանակ տանել մեծ վիշապի վրայ:

Ո՞րն է մեծ վիշապը, որին ոգին այլ ևս տէր և աստուած անւանել չի կամենում. «Դու-պարտաւոր-ես» — անս մեծ վիշապի անունը. իսկ առիւծի ոգին ասում է— «Ես կամենում եմ».

«Դու-պարտաւոր-ես»-ը ընկած է նրա ճանապարհին, ոսկէշոյ, որպէս մի թեփաւոր կենդանի և ամեն մի թեփի վրայ փայլում է ոսկու պէս. «Դու-պարտաւոր-ես»:

Հազարամեայ արժէքներ են փայլում այս թեփերի վրայ, և այսպէս է խօսում վիշապներից ամենազօրեղը. բոլոր իրերի արժէքը—անս փայլում է ինձ վրայ:

«Բոլոր իրերի արժէքը արդէն ստեղծւած է և ողջ ստեղծած արժէքը—այդ ես եմ: Ճշմարիտ, այլ

ևս ոչ մի «Ես-կամենում-եմ» գոյութիւն չպիտի
ունենայ»։ Այսպէս է խօսում վիշապը։

Ի՛մ եղբայրներ, ի՛նչ բանի է հարկաւոր ոգու
առիւծը։ Ի՛նչի՛ չի բաւարարում նաև կրող կենդա-
նին, որ զրկանք է կրում և ակնածում։

Նոր արժէքներ ստեղծել—այս առիւծը, առիւ-
ծային ոգին էլ անկարող է դեռ, բայց ազատութիւն
ստեղծել նոր ստեղծագործութեան համար—այս կա-
րող է առիւծի ուժը։

Ազատութիւն ձեռք բերել և սրբազան ոչ նոյն
խօսկ պարտականութեան հանդէպ—զրա համար, ի՛մ
եղբայրներ, առիւծ պէտք է լինել։

Նոր արժէքների իրաւունք առնել—ահա ամե-
նաստկալի առնելը մի կրող և ակնածող ոգու հա-
մար։ Ճշմարիտ, նրա համար յափշտակել է այդ նշա-
նակում և յափշտակիչ դազանի մի գործ։

Երբեմն՝ որպէս իր ամենասուրբ բանը՝ սիրում
էր նա «Դու-պարտաւոր-եսը»։ Արդ ցնորք և քմա-
հաճոյք պէտք է դանի նա նաև ամենասուրբ բանի
մէջ, որպէսզի նրա սիրուց ազատութիւն խլել կա-
րողանայ—առիւծ պէտք է լինել այս յափշտակու-
թեան համար։

Բայց ասացէք, ի՛մ եղբայրներ, ի՛նչ կարող է
անել մանուկը, որ առիւծը չկարողացաւ։ Մի՞թէ յափըշ-
տակիչ առիւծը դեռ մանուկ էլ պիտի դառնայ։

Անմեղու՛րիւն է մանուկը և մոռացումն, մի
նոր սկիզբ, մի խաղ, մի ինքնագլոր անիւ, առաջին
չարժում, մի սրբազան Այո։

Այո, ի՛մ եղբայրներ, ստեղծագործութեան խա-
ղի՛ համար սրբազան կելպով Այո ասելու կարիք կայ։

Ի՛ր կամքն է կամենում ոգին, ի՛ր աշխարհն է ստա-
նում աշխարհակորոյսը:

Ոգու երեք կերպարանափոխութիւնների մասին
խօսեցի ձեզ հետ. թէ ինչպէս է ուղտ դառնում
ոգին, և ուղտը—առիւծ, և ի վերջոյ՝ առիւծը—մա-
նուկ:

Այսպէս խօսեց Չրադաշտը: Եւ այն ժամանակ
նա ապրում էր մի քաղաքում, որ «խայտարղէտ
կով» էր կոչւում:

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Զրագաշտի մօտ գովեցին մի անգամ մի իմաստունի, որ շատ լաւ գիտէր խօսել քնի ու առաքինութեան մասին. նա շատ է յարգւում ու վարձատրւում դրա համար. և բոլոր պատանիները խորհրւում են նրա ամբիոնի շուրջը: Նրա մօտ գնաց Զրագաշտը—և բոլոր պատանիների հետ նստեց ամբիոնի առաջ: Եւ այսպէս խօսեց իմաստունը.

Պատիւ քնին ու ամօթխածութիւն նրա առաջ. այս է առաջին պատւիրանը: Հեռացէք բոլոր նրբանց ճանապարհից, որ վաա են քնում և արթուն մնում գիշերը:

Ամօթխած է անգամ գողը քնի առաջ. նա միշտ գիշերն է գողանում: Անամօթ է սակայն պահապանը գիշերւայ, անամօթ կերպով է նա իր փողը կրում:

Դիւրին արւեսա չէ քնելը. պէտք է հետևեալ ամբողջ օրը արթուն մնալ:

Տասն անգամ օրւայ մէջ պէտք է յաղթահարեո ինքզ քեզ. այդ յոգնեցնում է բաւականին և հաշիշ է հոգու համար:

Տասն անգամ պիտի հաշտես ինքզ քեզ հետ. իսկ յաղթահարումն գտն բան է, և լաւ չէ քնում. անհաշտը:

Տասն ճշմարտութիւններ պիտի գտնես օրեկան.

Թէ ոչ՝ գիշերն էլ ճշմարտութիւն կորոնեո, և քաղ-
ցած կմնայ քո հոգին:

Տասն անգամ պիտի ժպտաս օրեկան ու զւարթ
լինես, թէ ոչ՝ ստամոքսդ կխանգարի քեզ գիշերը,
մելամաղձոտութեան այգ հայրը:

Քչերը դիտեն այո, բայց պէտք է բոլոր առա-
քինութիւններն ունենայ լաւ քնելու համար: Ես
ոուտ կվկայեմ, անհաւատարիմ կլինեմ ամուսնուս:

Թէ վատ աչքով կնայեմ մերձաւորիո աղջկան:
Այս ամենը երբէք չի հաշուում լաւ քնի հետ:

Եւ անգամ, եթէ մէկը բոլոր առաքինութիւն-
ներն ունի, մի բան էլ լաւ պիտի հասկանայ—հենց
իրենց առաքինութիւններին ճիշտ ժամանակիս քը-
նելու ուղարկել:

Որ իրար հետ չկուեն, այդ խելօք պառաւ կու-
նայք: Իւ քեզ համար, դո՛ւ գժբանա:

Քաղաղութիւն Աստու և հարևանի հետ. այս-
պէս է կամենում լաւ քունը. խաղաղութիւն նաև
հարևանի սատանային. ապա թէ ոչ՝ գիշերը քունդ
կխանգարի:

Պատիւ իշխանութեան և հնազանգութիւն, նաև
ծուռ, ոչ շխտակ իշխանութեան: Այսպէս է կամե-
նում լաւ քունը: Ի՞նչ անեմ, որ ուժը մեծ սիրով
ծուռ ոտների վրայ է շրջում:

Նա է միշտ ինձ համար ամենալաւ հովիւը, որ
իր ոչխարը կանաչ . . . քն է ասնում. այսպէս է
պահանջում լաւ քունը:

Շատ պատիւներ չեմ ուզում, ոչ էլ մեծ գան-
ձեր. այդ բորբոքում է փայծաղը: Սակայն չի կա-
րելի լաւ քնել առանց լաւ անունի և մի փոքրիկ
գանձի:

Ինձ համար աւելի սիրելի է մի փոքրիկ հասարակութիւնը՝ քան թէ վատը, բայց այդ ճիշտ ժամանակին պիտի դայ աւ զնայ: Այսպէս է պահանջում լաւ քունը:

Ինձ շատ են դուր պալիս և հոգով աղքատները. նրանք նպաստում են քնին. երջանիկ են նրանք, մանուածնոց երբ նրանց չես հակաճատում:

Այսպէս է անցնում առաքինի մարդու օրը: Երբ գիշեր է լինում՝ դպուշանում եմ քնին կանչելու: Նա չի ուզում, որ իրեն կանչեն, քունը, որ առաքինութիւնների տէրն է:

Այլ մտածում եմ՝ թէ ինչ եմ արել ա մտածել ցերեկը: Որոճալով հարցնում եմ ինձ, համբերո՞ղ որպէս մի կով. սրմնը էին քո տան յաղթահարումները:

Եւ սրմնը՝— այն տան հաշտութիւններն ու տան ճշմարտութիւնները, և տան ծիծաղները, որոնցով խնամում է իրեն իմ սիրտը:

Այսպէս խօրհեղով և օրօրեկով քատումն մաքրից քունս վրայ կոխեց յանկարծ, այդ անկոչը, առաքինութիւններն տէրը:

Քունը ծեծում է աչքերս, աչքերս ծամբանում են: Քունը դիպչում է բերնիս, և բայ և մնում այդ

ճշմարիտ, փափուկ կրունկներիով և այդ մերձեցում, գոյերից սիրելին, և գոգանում մաքերս: Լնում եմ յիմարի պէս կանգնած, ինչպէս այս ամբիտնը:

Սակայն գեռ շատ չկանգնած՝ տես պատկած եմ արդէն:—

Երբ Գրադաշտը իմաստունի այս խօսքերը լսեց՝ ծիծաղեց իր սրտում, որովհետեւ այդ պահին մի լոյս բացւեց նրա համար: Ու այսպէս խօսեց իր սրտում:

Յիմարի մէկն է այս իմաստունը իր քառսուն մաքերով, բայց ես հաւատում եմ, որ նա լաւ քնել զիտէ:

Ըստինքեան երջունիկ է նա, սվ այս իմաստունին մօտ է սպրում: Այլ պիտի քունը վարակում է, անդամ հառտ պատի միջով վարակում է գա:

Մի կախարդութիւն կայ անդամ նրա ումբիոնի մէջ: Եւ իզուր չէին պատանիները առաքինութեան քարոզչի առջ նստել:

Ահա նրա իմաստութիւնը, տրթուն մնայ՝ լաւ քնելու համար եւ ճշմարիտ, եթէ կեանքը ոչ մի իմաստ չունենար, և եթէ ես հարկադրւած լինէի անմտութիւնը ընտրել՝ ինձ համար այդ ընտրելու ամենաարժանի անմտութիւնը կլինէր:

Այժմ եմ ես պարզ հասկանում՝ թէ ինչ էլին մի ժամանակ մարդիկ փնտրում, երբ առաքինութեան ուսուցիչներ էին որոնում: Լաւ քուն էլին փնտրում և քնաբեր առաքինութիւններ:

Ամբիոնների բոլոր այդ դովական իմաստունների համար իմաստութիւնը սուսնց կրազների քունն էր, նրանք կեանքի աւելի լաւ իմաստ չեն ճանաչում:

Այսօր էլ գեռ կան մի քանիսը, որպէս առաքինութեան այդ քարոզները, և ոչ միշտ այդքան անկեղծ: Բայց դրանց ժամանակն անցել է: Եւ շատ երկար չկանգնած՝ պառկած են արդէն:

Երանի այս քնկոտներին, որովհետեւ դրանք պիտի շուտով քուն մանեն:—

Այսպէս խօսեց Չրադաշար:

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԸՆԴՈՒՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Երբեմն Զրադաշտն ևս իր ցնորքը մարդու անդին էր որոնում բոլոր հանդերձեալ ընդունողների նման. մի չարատանջ և խոշաանդւած Ասածու գործ էի համարում աշխարհը:

Երազ էր թւում աշխարհը և բանաստեղծութիւնը մի Ասածու. ասուածայնօրէն գծգոհի աչքերի առջև գունազեղ մի ծուխ:

Բարի և չար, վայելք ու ասնջանք, ես և դու— գունազեղ մի ծուխ թւում էր ինձ ստեղծագործող աչքերի առաջ: Իրենից աչքը դարձնել էր ուզում արարիչը և—ստեղծեց աշխարհը:

Արբեցուցիչ վայելք է տանջւողի համար իր ասնջանքներից աչքը դարձնել և իրեն կորցնել: Արբեցուցիչ վայելք և ինքն իրեն կորցնել էր թւում ինձ երբեմն աշխարհը:

Այս աշխարհը, յաւերժօրէն անկատարեալ, պատկերը մի յաւերժական հակասութեան, մի անկատար պատկեր, արբեցուցիչ մի վայելք իր անկատար արարչի համար. այսպէս էի կարծում աշխարհը երբեմն:

Ուստի և մի ժամանակ իմ ցնորքը մարդու անդին էի որոնում, բոլոր անգրչիրիմեանների նման. ճշմարիտ որ մարդու անդին:

Ա՛խ, եղբայրներ, այս ասուածը, որ ես ստեղծեցի մարդու ձևով դործ էր և մարդու խենթութիւն, նման բոլոր ասուածներին:

Մարդ էր նա, և միայն մի խղճուկ բեկոր մարդ և ես. սեփական մտքից և լոցից ծաղեց ինձ համար այդ ուրաւականը, ճշմարիտն եւ ասում եւ տես. ուրաւականը խուսափեց ինձնից!

Տանջանք կլինէր ու շարժարանք այժմ ինձ, ապաքինւողիս համար, հաւատալ այդպիսի ուրաւականներին: Տանջանք կլինէր ոյժով ինձ համար և ստորացում: Այսպէս եմ խօսում անդրշիրիմեանների հետ:

Տանջանքն էր ու անկարողութիւնը, որ ստեղծեցին բոլոր հանդերձեալ աշխարհները. և երջանկութեան այն կարճատև խենթութիւնը, որ տանջւողն է միայն զգում:

Հաւատացէք ինձ, իմ եղբայրներ, մարմինն էր այն, որ յուսահատուեց մարմնից, յիմարացած ոգու մատներով շօշափեց նա վերջին պատերը:

Հաւատացէք ինձ, իմ եղբայրներ, մարմինն էր, որ յուսահատուեց երկրից, նա էր, որ լսեց գոյութեան որովայնը իր հետ խօսելիս:

Եւ խփեց գլուխը վերջին պատերից անցնելու համար, և ոչ միայն գլուխը և,— դէպի «այն աշխարհը»:

«Այն աշխարհը» սակայն լաւ է թաքցրած մարդուց, այն մարգագուրկ ոչ-մարգկայն աշխարհը, որ մի երկնային ոչնչութիւն է. և գոյութեան որովայնը չի խօսում բնաւ մարդու հետ, գոնէ իբրև մարդ:

Ճշմարիտն եմ ասում, դժւար է ապացուցել ողջ գոյութիւնը և դժւար է խօսեցնելը: Ասացէք ինձ, իմ եղբայրներ, բոլոր իրերից ամենազարմանալին ամենից լաւ չէ՞ ապացուցւած:

Այո, այս Եսը և Եսի հակասութիւնն ու խառնաշփոթութիւնը ամենից անկեղծ են խօսում իրենց գոյութեան մասին, այս սանգձագործող, կամեցող, արժէքաւորող Եսը, որ իրերի չափն ու արժէքն է:

Եւ այս է ամենաանկեղծ գոյութիւնը, Եսը—որ խօսում է մարմնից և դեռ մարմին է կամենում, անգամ երբ նա բանաստեղծում է, երազում և փշրած թևերը թտփահարում:

Աւելի ու աւելի անկեղծ է խօսում դա, Եսը. և որքան աւելի է սովորում՝ այնքան աւելի բառեր ու յարգանքներ է գտնում մարմնի ու երկրի համար:

Մի նոր հպարտութիւն սովորեցրեց ինձ իմ Եսը, այդ եմ սովորեցնում մարդկանց. այլ ևս չթաքցնել գլուխը երկնային բաների մէջ, այլ ազատ կրել, մի երկրային գլուխ, որ իմաստ է ապլիս երկրին!

Մի նոր կամք եմ սովորեցնում մարդկանց, ընարել այդ ճանապարհը, որ գնացել է մարդը կսւրօրէն, և լաւ համարել այդ և այլ ես չշեղւել դրանից հիւանդների և մեռնողների նման:

Հիւանդներ և մեռնողներ էին նրանք, որ արհամարհեցին մարմինն ու երկիրը և հնարեցին երկնային ու փրկող արեան կաթիլները. բայց այս քաղցրը ու ցաւոտ թոյներն էլ նրանք մարմնից ու երկրից վերցրին!

Իրենց թշւառութիւնից փախչել էին կամենում, և աստղերը նրանցից շատ էին հեռու: Եւ հառաչեցին նրանք. «Օ», երանի թէ երկնային ճանապարհներ լինէին մի այլ գոյութիւն և երջանկութիւն սկսելու՝! Եւ հնարեցին իրենց արահետներն ու արիւնտա բաժակները:

Իրենց մարմնից ու աշխարհից զերծւած՝ ցնո-

րում էին դրանք, այս անշնորհակալները: Սակայն
ձև էին պարտական այդ գերծման պայքարի ու վա-
յելքի համար. իրենց մարմինն ու երկրին!

Մեղմ է Ջրագաշար հիւանդների նկատմամբ:
Ճշմարիտ, նա չի զայրանում նրանց մխիթարու-
թեան և ապերախտութեան եղանակի վրայ. թող լի-
նեն ապաքինւողներ ու յաղթահարողներ և մի վսեմ
մարմին տանեն!

Ջրագաշար չի զայրանում նաև ապաքինւողի
վրայ, երբ սա քնքշօրէն նայում է իր ցնորքին և կէս
գիշերին իր Ասածու դերեզմանի շուրջը սողում.
սակայն հիւանդութիւն և հիւանդ մարմին են մնում
դեռ նրա արցունքները:

Միշտ էլ հիւանդ ժողովուրդ է եղել նրանց մէջ, ո-
րոնք բանաստեղծում և աստուծամոլ են. կատաղօրէն
ատում են դրանք ծունդին և առաքինութիւններից
ամենանորին, որ կոչւում է — Ազնւութիւն:

Իէպի յետ են նայում դրանք մշտապէս, գէպի
մութ ժամանակները, երբ ցնորքն ու հաւաար այլ
բան էին: Բանականութեան մոլեգնութիւն էր •
աստուածամանութիւնը և կասկածանքը-յանցանք:

Շատ լաւ եմ ճանաչում այս աստուածամաննե-
րին: Դրանք ուզում են, որ իրենց հաւատան, և
կասկածանքը մեղք լինի: Շատ լաւ գիտեմ նաև՝ թէ
ինչ բանի են հաւատում իրենք:

Ճշմարիտ եմ՝ — ոչ հանդերձեալ աշխարհ-
ներին և ոչ էլ փրկարար արեան կաթիլներին, այլ
մարմինն են նաև հաւատում նրանք և իրենց սեփա-
կան մարմինն է նրանց ճիւրճին իրը — Ding an
sich-ը:

Բայց մի հիւանդոս իր է այդ նրանց համար և

սրաով կուգէին փոխել իրենց մորթը: Ուստի և լոում են մահւան քարոզիչներին և իրենք հանգերձեալ, անգին աշխարհներ քարոզում:

Աւելի լաւ է, իմ եղբայրներ, լսեցէք առողջ մարմնի ձայնին. մէ աւելի ազնիւ ու մաքուր ձայն է այդ:

Աւելի անկեղծ ու մաքուր է խօսում առողջ մարմինը, կատարեալն ու ուղղանկիւնը. և նա խօսում է Երկրի Իմաստից:

Այսպէս խօսեց Չրագաշտը:

ՄԱՐՄԻՆԸ ԱՐՀԱՄԱՐՀՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Մարմինը արհամարհողներին եմ ուզում ուզգել խօսքս: Ոչ թէ իրենց սովորածը վերստին սովորեն ու սովորեցնեն, այլ իրենց մարմինն մնաս բարև պիտի ասեն և այնպէս լռեն:

«Մարմին ու հոգի եմ ես»—այսպէս է խօսում մանուկը: Եւ ինչո՞ւ չպէտք է մանուկների պէս խօսենք:

Սակայն արթսւնն ու իմաստունը ասում է. Մարմին եմ ես ամբողջովին, և ուրիշ ոչինչ. ու հոգին մի բառ է միայն մարմնի մի երևոյթի համար:

Մարմինը մի մեծ բանականութիւն է, մի իմաստ սւնեցող բաղմութիւն, կոիւ և խաղաղութիւն, մի հօտ և մի հովիւ:

Քո փոքրիկ բանականութիւնն ևս, իմ եղբայր, քս մարմնի գործիքն է, որ գու «հոգի» ես անւանում, մի փոքրիկ գործիք ու խաղալիք քո մեծ բանականութեան:

«Ես» ես ասում դու և հպարտանում այդ խօսքով: Սակայն աւելի մեծը—որին գու հաւատայ չես կամենում—քո մարմինն է և նրա մեծ բանականութիւնը. սա «Ես» չի ասում.—բայց «Ես» գործում:

Ինչ զգայարանքը գգում է, ինչ ոգին ճանաչում—այդ երբէք վերջ չունի ինքն իր մէջ: Սա-

կայն զգայարանքն սւ սգին ուղում են քեղ համագել,
որ իրենք վախճանն են բոլոր իրերի. այնքան մնա-
միս են նրանք:

Թաղալիքներ ու գործիքներ են զգայարանքն ու
ոգին, իսկ դրանց ետև կանգնած է Ինքը. Եւ Ինքն
էլ է սրոնում զգայարանքների աչքերով, գա էլ է
ականջ գնում ոգու ականջներով:

Միշտ էլ ականջ է գնում սւ որոնում ոգին. դա
համեմատում է, հարկագրում, նւաճում, խորտակում:
Իս ըշխում է և նաև ես-ին իշխողն է:

Քո մաքերի ու զգացմունքների ետևում, իմ
եղբայր, մի գորեղ հրամայող է կանգնած, մի ան-
ձանօթ կարգադրող, որ կոչւում է — Ինքն: Քո մարմնի
մէջ է դա սպրում, քո մարմինն է գա:

Քո մարմնի մէջ աւելի շատ բանականութիւն
կայ՝ քան քո լաւագոյն իմաստութեան մէջ: Եւ ո՞վ
գիտէ, ինչ նպատակի համար է հարկաւոր մարմնին
քո լաւագոյն իմաստութիւնն անգամ:

Քո Ինքը ծիծաղում է քո Եսի և նրա հպարտ
տախտիւնների վրայ: «Ինչ են ինձ համար ոստիւններն
ու թոխիչքները մաքի—ասում է այդ ինքն իրեն: Մի
պառլայտ գործող ճանապարհ դէպի իմ նպատակը: Եսի
նեցուկն եմ ես և թելադրողը նրա մաքերի»:

Ինքը ասում է Եսին. «այստեղ ցաւ զգա». և
անա ցաւ է զգում դա ու խորհում, ինչպէս անի,
որ այլ ևս չտանջւի—իսկ գրա համար պէ՛տ է մտածի:

Մարմինը արհամարհողներին մի բան եմ ուղում
ասել: Որ նրանք արհամարհում են՝ նշան է, որ յար-
գում են: Ի՞նչն է այն, որ յարգանքն ու արհամար-
հանքը, արժէքն ու կամքը սաեղծեց:

Ստեղծագործ Ինքը ստեղծեց իր համար յար-

զանքն ու արհամարհանքը, ստեղծեց իր համար ցաւն ու հաճոյքը: Ստեղծող մարմինը ստեղծեց ոգին իրրե ձեռք իր կամքի:

Անգամ ձեր յիմարութեան ու արհամարհանքի մէջ, ով մարմինը արհամարհողներ, ձեր ինքին էք ծառայում: Ես ասում եմ ձեզ, ձեր ինքն է ուղում մեռնել և հրաժարւել կեանքից:

Այլ ևս չի կարողանում դա այն, ինչ սիրով կկամենար—ստեղծագործել իրենից վեր: Այս է ցանկանում նա ամենից շատ, այս է նրա ողջ խանդադատանքը:

Բայց այդ ուշ հասկացաւ—ուստի ձեր ինքը խորաակւել, մեռնել է ուղում, ով գուք, մարմինը արհամարհողներ:

Քորաակւել է ուղում ձեք ինքը, ուստի և գուք դարձաք մարմինը արհամարհողներ: Որովհետեւ այլ ևս անկարող էք ձեզնից վեր ստեղծագործելու:

Ուստի և դայրանում էք կեանքի ու երկրի վրայ: Անգիտակ մի նախանձ կայ ձեր արհամարհանքի խեթ հայեացքի մէջ:

Ես չեմ գնում ձեր ճանապարհով, ով գուք, մարմինը արհամարհողներ, գուք չէք կարող ինձ համար կամուրջ լինել գէպի Գերմարգը:—

Այոպէս խօսեց Զրադաշար:

ԲԵՐԿՐԱՆՔՆԵՐԻ ՈՒ ՏԱՆՁԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Ի՛մ եղբայր, եթէ գու մի առաքինութիւն ունես
և այդ քո առաքինութիւնն է, ապա այդ ոչ ոքի հա-
մար ընդհանուր չէ:

Իհարկէ, գու կամենում ես այդ իր իսկական
անունով անւանել ու սիրել. գու կամենում ես նրա
ականջից քաշել և հեար ժամանակ անցկացնել:

Բայց անս. ընդհանուր է դրա անունը. ժողո-
վուրդն էլ է այդպէս անւանում և քո առաքինու-
թեան հետ՝ ժողովուրդ ու նախիր ես դարձել:

Աւելի լաւ կանէիր, եթէ ասէիր. «անասելի ու
անանուն է, ինչ գառն ցաւ ու քաղցր բերկրանք է
պաաճառում իմ հոգուն և քաղց—իմ ներքինին»:

Անունների զաղանապահութեան համար շատ
բարձր թող լինի քո առաքինութիւնը. և եթէ գու
նրա մասին խօսելու լինես՝ մի ամաչիր նրա մասին
թոթովելուց:

Այսպէս խօսիր ու թոթովիր. այդ իմ գերա-
զոյնն է, այդ սիրում եմ ես, այսպէս գուր է դալիս
դա ինձ, այսպէս եմ կամենում, ես գերազոյնը:

Ձեմ ցանկանում ես այդ իբրև օրէնք մի Աստ-
ծու, չեմ ցանկանում ես այդ իբրև մարդկայն օրէնք
ու կարիքի արգասիք. թո՛ղ երբէք այդ ինձ համար
գերաշխարհների ու գրախանների, ուղեցոյց չլինի:

Երկրային մի առաքինութիւն է այգ, որ ես սիրում եմ. շատ քիչ խելօքութիւն կայ դրա մէջ, և ամենից քիչ—բանականութիւնը բոլորի:

Սակայն այս թռչունը ինքն շինեց ըր բունը իմ մօտ. գրա համար էլ սիրում ու քնքշում եմ նրան,—արդ նստած է նա իմ մօտ իր ոսկէ ձուերի վրայ:

Այսպէս պիտի թօթովես և քո առաքինութիւնը գովես:

Երբեմն կրքեր ունէիր և չար անւանեցիր այգ: Իսկ այժմ միայն առաքինութիւններ ունես. սրանք կրքերից են աճում:

Քո ամենաբարձր նպատակները քո կիրք-տանջանքներին նւիրեցիր և ահա դրանք քո առաքինութիւններն ու կիրք-խնդութիւնները դարձան:

Եւ՝ թէ գու մոլեգնողների սերնդից ես՝ թէ հեշտասէրների, մոլեռանդների՝ թէ վրիժառուների:—

Ի վերջոյ քո բոլոր կրքերը առաքինութիւններ դարձան և քո բոլոր սաասնաները—հրեշտակներ:

Կատաղի շներ ունէիր երբեմն. քո ներքնայարկում. ի վերջոյ սակայն թռչունների ու քաղցր երգիչների փոխւեցին:

Քո թոյներից գու քո բալասանը շինեցիր. մեղամաղձոտութեան քո կովը կթեցիր,—արգ խմում ես քաղցր կաթը նրա ծծերի:

Ու այլ ևս ոչինչ չար բան չի աճում քեզնից, նոյն իսկ այն չարը, որ առաքինութիւններից պայքարից է աճում:

Ի՛մ եղբայր, եթէ գու բախա ունես, ապա դու միայն մի առաքինութիւն ունես, և ոչ աւելի. այսպէս հեշտ կանցնես կամրջից:

Յաականիշ երևոյթ է շաա առաքինութիւններ,
բայց մի ծանր վիճակ ունենալը. և ոմանք անապատ
գնացին և սպանեցին իրենց, որովհետև յոգնած ու
անկարող էին՝ առաքինութիւնների ճակատամարտ և
ճակատամարտի դաշտ լինելու:

Ի՛մ եղբայր, վնաս բան է կոխն ու ճակատա-
մարտը. բայց անհրաժեշտ է այս շար բանը, ան-
հրաժեշտ են նախանձը, անվստահութիւնն ու զըր-
պարաութիւնը քո առաքինութիւնների համար:

Տես՝ թէ ինչպէս է քո առաքինութիւններից
իւրաքանչիւրը գերազոյնին ձգտում. գա քո ողջ ոգին
է կամենում, որ սա իր մունեակը լինի, դա քո ողջ
ուժն է կամենում—քո ուժը ցատումի, ասելութեան
և սիրոյ:

Պանդոս է իւրաքանչիւր առաքինութիւն միւս-
ների վրայ, իսկ խանգոտութիւնը սոսկալի բան է:
Առաքինութիւններն էլ կարող են խորաակել խան-
գոտութիւնից:

Ում պաշարում է խանգոտութեան բացը, նա ի
վերջոյ՝ կարիճի նման՝ իր դէմ է ուզղսւմ թսւնաւո-
րած խայթը:

Ա՛հ, իմ եղբայր, չես տեսել գու երբէք, թէ
ինչպէս է առաքինութիւնը ինքն իրեն զրպարտում
և խայթելով մեռցնում:

Մարգս մի բան է, սր պիտի յազթահարւի. և
զրա համար դու պիտի սիրես քս առաքինութիւն-
ները, — սրովհետև նրանք պիտի խորտակեն քս
կեանքը:

Այսպէս խօսեց Չրագաշար:

ԴԺԳՈՅՆ ՈՃՐԱԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ.

Դուք չէք ուղում սպանել, ո՛վ դատաւորներ սւղո՛հի քրմեր, նախ քան կենդանու գլխով անելը: Տեսէ՛ք, գժգոյն յանցաւորը գլխով արեց. նրա աչքից մի մեծ արհամարհանք է խօսում:

«Իմ Եսը մի բան է, որ պիտի յաղթահարւի. իմ Եսը մեծ արհամարհանքն է մարգի», այսպէս է խօսում այդ աչքը:

Որ նա ինքն իրեն դատեց՝ այդ նրա լաւագոյն ընկալն էր. մի թողէ՛ք վեհին վերստին իր ցածութեան մէջ ընկնելու:

Փրկութիւն չկայ նրա համար, ով ամենջուր է այսպէս ինքն իր մէջ, իր վատութեան համար. աւելի լաւ է արագ մահը:

Ձեր սպանելը, ո՛վ գաաւորներ, թո՛ղ կարեկցանք լինի և սչ վրէժ: Եւ երբ սպանում էք, աշխատեցէ՛ք գրանով կեանքը արգարացնել:

Բաւական չէ, որ գուք հաշաւում էք նրա հետ, որին սպանում էք: Ձեր ախրութիւնը թո՛ղ սէր լինի դէպի Գերմարգը. այսպէս միայն կարող էք արգարացնել ձեր կեանքը շարունակելը:

«Թշնամի» պիտի ասէք, բայց ոչ «չարագործ». «հիւանդ» պիտի ասէք, բայց սչ «սրիկայ», «յիմար» պիտի ասէք, բայց սչ «մեղսաւոր»:

Եւ գնւ, կարմիր գաաաւոր, եթէ բարձրաձայն
ասել կարսղանայիր, ինչ որ գու կաաարել ես ար-
գէն քո մաքում՝ ամեն ոք կգոչէր. «Թող կորչի այդ
գարչելի արարածն ու թունաւոր որդը»:

Այլ բան է սակայն միաքը և այլ բան գործը, և
բալորովին այլ բան—գործի պատկերը: Հիմքի անիւը
չի գլորւում դրանց միջև:

Մի պաակեր այս գժգոյն մարզին գունաաեցրեց:
Հաւասար էր նա իր գործին, երբ այդ կաաարեց,
բայց գրա պաակերը ասնել չկարողացաւ, երբ գոր-
ծը արգէն կատարւած էր:

Միշտ ինքն իրեն մի գործի գործադն էր համա-
րում: Խենթութիւն եմ անւանում ես այդ. բացա-
ռութիւնը նրա համար էութիւն գարձաւ:

Գիծը կախարգում է հաւին. այն քայլը, սր նա
կատարեց, կախարգեց նրա բանականութիւնը—գոր-
ծից յետոյ երևան եկող խենթութիւն եմ անւանում
ես այդ:

Հսեցէք, ո՛վ դատաւորներ, մի այլ խենթութիւն
էլ կայ. գա երևան է գալիս գործից առաջ: Ա՛հ, գուք
չէք կարողանում հարկաւոր չափով թափանցել այդ
հոգսւ մէջ:

Այսպէս է խօսում կարմիր գաաաւորը. «Ի՞նչ է
սպանել այս ոճրագործը. նա կողսպաել էր կամե-
նում»: Բայց ես ասում եմ ձեզ. նրա հոգին արիւն
էր ուղում և ոչ կողոպում. նա ծարաւի էր դանակի
երջանկութեան:

Նրա խեղճ բանականութիւնը սակայն չըմբռնեց
այս խենթութիւնը և համոզեց նրան: «Ի՞նչ բան է
արիւնը, ասաց նա, եթէ չես ուղում գոնէ մի կողո-
պում էլ անել, մի վրէժ առնել»:

Ու նա լսեց իր թշւառ բանականութեան, որ-
տէս կապար ծանրացաւ նրա խօսքը իր վրայ—և նա
կողուողտեց սպանելիս: Նա չէր ուզում իր խենթու-
թիւնից ամաչել:

Եւ անձ իր մեղքի կապարը ծանրանում է իր
վրայ, ու վերստին անշարժ է նրա խեղճ բանակա-
նութիւնը, այնպէս ընդարմացած, այնպէս ծանր:

Եթէ գոնէ իր զլուխը թափ տալ կարողանար՝
ցած կգլորւէր նրա բեռը. բայց սվ կարող է այդ
զլուխը թափ տալ:

Ի՞նչ է այս մարգը. հիւանդութիւնների մի կոյտ,
որոնք ողու միջոցով աշխարհ են մտնում և այնտեղ
իրենց որսն անել կամենում:

Ի՞նչ է այս մարգը. վայրի օձերի մի կէփկ, որոնք
շատ սակաւ են հանդչում իրար կողքի և հեռա-
նում իրենց համար ու որս վնտրում աշխարհում:

Նայեցէք այս խեղճ մարմինն. ինչ նա կրեց ու
ցանկացաւ, այդ մեկնեց այս խեղճ հոգին ըստ իր
հասկացածի,—այդ մեկնեց իբրև հաճոյք ու մոլու-
թիւն գանակի երջանկութեան:

Ով հիւանդանում է այժմ, նրան տիրում է
չարը, որ չար է հիմա. ցաւեցնել է նա ուզում
նրանով, ինչ իրե՞ցաւ է պատճառում. Բայց եղել
են և այլ ժամանակներ, և այլ չար ու բարի:

Չար էր երբեմն և կասկածը ու դէպի ինքը ձրգ-
տող կամքը: Այն ժամանակ հիւանդը հերձաժող և
վհուկ էր յայտարարում: Իբրև հերձաժող և վհուկ
աանջւում էր նա և տանջել կամենում:

Բայց այս չի մտնում ձեր ականջը. ձեր բարի-
քերին վստահում է այդ, լսում եմ ձեզնից. բայց ի՞նչն
նշանակութիւն ունեն ինձ համար ձեր բարիները:

Ձեր բարիների շատ բանը դուք երբեք է ինձ, և ոչ ձեր չարը: Կցանկայի, որ դուք մի խենթութիւն ունենայիք, որ ձեր կեանքը խորասկէր, որպէս այս դունաւա ոճրագործը:

Ճշմարիտ, ես կցանկայի, որ ձեր խենթութիւնը ճշմարտութիւն կամ հաւատարմութիւն կամ արդարութիւն կոչուէր. բայց դուք առաքինութիւն ունէք երկար ապրելու և այն էլ մի եղկելի գոհունակութեան մէջ:

Ես գեաի ափի վանդակապառն եմ. ո՛վ կարող է, թո՛ղ բռնի ինձնից. ձեր թիկնացուպը սակայն ես չեմ:—

Այսպէս խօսեց Չրագաշար:

ԿԱՐԴԱԼՈՒ ԵՒ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Բոլոր դրածներից միայն այն եմ սիրում, ինչ մէկը իր արիւնտֆն է դրում: Գրիր արիւնտֆ. և կտեսնես, որ արիւնը ողի է:

Դիւրին բան չէ ուրիշի արիւնը հասկանալ. ես աաում եմ պարագ ընթերցողներին:

Ով ճանաչում է ընթերցողին՝ նա ոչինչ չի ա-նում ընթերցողի համար: Մի դար ևս ընթերցող—և ողին էլ կդարձահոտի:

Որ ամեն ոք կարգալ պիտի սովորի՝—այս միտքը փշայնում է ոչ միայն դրելու ցանկութիւնը, այլ և մտածելու:

Երբեմն ողին Աստուած էր, ապա դա մարդ դարձաւ և հիմա էլ ամբոխ է դառնում:

Ո՛վ արիւնտֆ ու հակիրճ ասացածքներով է դրում՝ նա չի կամենում, որ իրեն կարդան, այլ անգիր անեն:

Լեռների վրայ է ամենամօտ ճանապարհը մի գաղաթից դէպի միւսը. բայց դրա համար դու պէտք է երկար սաներ սենենաս. իմաստալից ասացածք-ները պիտի լեռնագաղաթներ լինեն. և նրանք, որոնց ուղղում են դրանք՝—մեծ և բարձրահասակ:

Օգը նոսր ու ջինջ, վտանգը—մօտ և ողին—լի սւրախ չարութեամբ. այսպէս շատ լաւ յարմարում են իրար:

Ես չար սգիներ եմ ուզում ունենալ իմ շուրջը, որովհետև ես քաջասիրտ եմ: Արիութիւնը, որ ուր-ւականներ է հալածում, ստեղծում է իր համար շար ոգիներ,--արիութիւնը ծիծաղել է կամենում:

Ես այլ ևս չեմ գգում ձեզ հետ. այս ամպը, որ ես տեսնում եմ իմ ոտների տակ, այս մթութիւնն ու ծանրութիւնը, որոնց վրայ ես խնդում եմ, դրանք են ձեր շանթառաք ամպն ու ամպրասպը:

Ի ուր վեր էք նայում, երբ հոգով բարձրանալ էք կամենում, իսկ ես ցած եմ նայում, որովհետև ես վերացած եմ արգէն:

Ո՞վ կարող է ձեզնից միաժամանակ ծիծաղել և վերացած լինել:

Ո՞վ ամենարարձր լեռներն է ելնում՝ նա ծիծաղում է բոլոր սգախաղերի և սգալըջութեանց վրայ:

Անհոգ, հեղնոտ, բռնակալ--այսպէս է կամենում մեզ աեսնել իմաստութիւնը. ս.ա մի կին է և միշտ էլ միայն ուղմիկին է սիրում:

Ի ուր ասում էք ինձ, «ծանր է կեանքը»: Բայց էլ ինչո՞ւ համար ձեր հպարտութիւնը ճաշից տուտջ և ձեր խոնարհութիւնը երեկոյեան:

Ծանր է կեանքը. բայց շատ էլ քնքոյշ մի ձևացէք. մենք բոլորս էլ դեղեցիկ բեռնատար էշեր և իշուհիներ ենք:

Ի՞նչ սւնենք ընդհանուր վարդի կոկոնի հետ, որ գողում է, երբ մի կաթիլ ցօղ է ընկնում իր մարմնի վրայ:

Ճշմարիտ է, որ մենք սիրում ենք կեանքը, ոչ թէ նրա համար, որ սովոր ենք ապրելու, այլ սր սովոր ենք սիրելու:

Միշտ էլ մի քիչ խենթութիւն կայ սիրոյ մէջ. Բայց ի՞ քիչ էլ խելք կայ խենթութեան մէջ:

Նաև ինձ, ես սր կեանքը շատ եմ սիրում,
թւում է թէ թիթեռներն ու սլապշակները—և ինչ
սրանց նման է մարդկանցից—ամենից շատ են բան
հասկանում. երջանկութիւնից:

Այս թեթև, խենթ, քնքոյշ և շարժուն հոգիներին
թրվալիս տեսնել—այս այնպէս է յուզում Ջրա-
գաշտին, սը նա արցունք է թափում կամ երգեր հը-
նարում:

Ես կհաւաասայի միայն այն Աստծուն, որ պա-
րել իմանար:

Եւ երբ ես իմ սատանային տեսայ՝ նրան բա-
ւականին լաւը գտայ, խորունկ, հիմնաւոր ու տօ-
նական. դա ծանրութեան ոգին էր—գրանից են
ընկնում բոլոր իրերը:

Ոչ թէ բարկութեամբ, ծիծաղելով է սպանում
մարդ: Արթնացէք, եկէք սպանենք ծանրութեան
սգին:

Ես սովորել եմ քայլել, և այժմ արդէն լու-
վազում եմ: Ես սովորել եմ թռչել, և հիմա չեմ ու-
զում, ինձ հրեն, սր տեղիցս շարժւեմ:

Այժմ թեթև եմ ես, այժմ թռչում եմ ես, այժմ
ես տեսնում եմ ինձ ինձնից ցած—այժմ մի աստ-
ւած է պարում իմ մէջ:

Այսպէս խօսեց Ջրագաշտը:

ԼԵՌԱՆ ՎՐԱՅԻ ԾԱՌԻ ՄԱՍԻՆ.

Զրագաշտի աչքը տեսել էր, որ մի պատանի խուսափեց իրենից: Եւ երբ նա մի երեկոյ մենակ անցնում էր լեռներով, որ պատում են այն քաղաքը, որ Յայտարդէտ կոչւ է կոչւում, յանկարծ պատահեց նա այդ պատանուն, որը նստել էր յենւած մի ծառի և յոգնած հայեացքով հովտին էր նայում: Զրագաշտը բռնեց ծառից, որի մօտ նստած էր պատանին, և այսպէս խօսեց:

«Եթէ ես այդ ծառը իմ ձեռներով թափ տալ կամենայի՝ չէի կարողանայ:

Բայց քումին, որ մենք չենք տեսնում, տանջում և թեքում է նրան, որ կողմը որ կամենում է: Մենք ամենից շատ անտես ձեռներից ենք տանջւում ու թեքւում»:

Այս խօսքի վրայ կանգ առաւ պատանին շփոթւած և ասաց. «Ես լսում եմ Զրագաշտին և հենց նոր նրա մասին էի մտածում»: Զրագաշտը պատասխանեց:

«Ինչո՞ւ ես վախենում դրանից.---ինչ որ ծառի հետ՝ նոյնը պատահում է և մարդի հետ:

Որքան նա դէպի վեր, դէպի շագուրն է ձգտում, այնքան աւելի ուժեղ են նրա արմատները ձգտում

դէպի երկիր, դէպ' ետ, դէպի մութն ու խորը—դէպի շարը»:

«Այո, դէպի շարը. գոչեց պաասնին. Ի՞նչպէս կարողացար ըմբռնել, գտնել իմ հոգին»:

Զրադաշտը ժպտաց ու ասաց. «Շատ հոգիներ դժւար է գտնել, լաւ է, որ մարդ այդ հնարի»:

«Այո, դէպի շարը, գոչեց պաասնին նորից»:

Իսկ ճշմարտութիւնն ասացիր, Զրադաշտ: Ես ինքս ինձ էլ չեմ հաւատում այն օրւանից, երբ ես դէպի բարձունքներն եմ ձգտում, և ոչ ոք էլ չի վստահում ինձ,—ինչպէս կատարւեց այս:

Ես շատ շուտ եմ կերպարանափոխւում. իմ այսօրը հերքում է իմ երէկը: Ես ցատկում եմ յաճախ աստիճաններից, երբ ես բարձրանում եմ,—և այս ինձ չի ներում և ոչ մի աստիճան:

Երբ ես վերևումն եմ ինձ բոլորովին մենակ եմ գտնում: Ոչ ոք չի խօսում ինձ հետ. մենակութեան սառնամանիքից գոզում եմ ես: Ի՞նչ եմ որոնում սակայն բարձունքում:

Իմ արհամարհանքն ու իմ կարօար անում են իրար հետ. որքան շատ եմ բարձրանում՝ այնքան աւելի եմ ատում նրան, ով բարձրանում է. ի՞նչ է որոնում նա բարձունքում:

Որքան եմ ամաչում իմ բարձրանալու և սայթաքելու համար: Որքան եմ ծաղրում իմ հեի՛հե գազազումն: Որքան եմ ատում ես թռչողին: Որքան յողնած եմ լինում բարձունքում»:

Այստեղ լռեց պատանին: Եւ Զրադաշտը դիտեց այն ծառը, որի կողքին կանգնած էին, և այսպէս խօսեց: «Այս ծառը կանգնած է մենակ այստեղ լեռան վրայ. նա անել, բարձրացել է մարդուց ու անասնից»:

Ու եթէ նա խօսել կամենար՝ ոչ ոք չէր ունենայ, որը հասկանար իրեն. այնքան բարձր է անել նա:

Եւ անհ սպասում ու սպասում է նա—սակայն ինչի՞ է սպասում նա: Նա ամպերի բնակավայրին շատ մօտ է ապրում. գուցէ նա առաջին կայծակին է սպասում:

Երբ Զրադաշտը ասաց այս խօսքերը՝ գոչեց մայրուկը ուժգին շարժումներով. «Այո, Զրադաշտ, դու ճշմարիտ ես ասում, իմ անկմանն էի ձգտում ես, երբ բարձունքներն էի սրոնում, և դու ես այն կայծակը, որին սպասում էի ես: Տես, ի՞նչ եմ ես գեռ այն օրւանից, երբ դու յայտնուել ես մեզ: Նախանձը գէպի քեզ—անհ թէ ինչը ինձ խորտակեց»: Այսպէս խօսեց պտտանին և լաց եղաւ գանձադի: Զրադաշտը սակայն ձեռը գրաւ նրա վրայ և տարաւ նրան իր հետ:

Եւ երբ նրանք բաւական ժամանակ գնացել էին իրար հետ՝ այսպէս սկսեց Զրադաշտը խօսել:

Սիրտս կարտում է այդ: Աւելի լաւ քան քո խօսքերը՝ քո ամբողջ վտանգը մտանում են քո աչքերը:

Իեռ դու տգաա չես, դու գեռ ձգտում ես ազատութեան: Չափազանց ձգահլուց շատ ես արթուն ու անքուն մնացել, յոգնել ու գժգունել:

Իէպի ազատ բարձունքներն ես ձգտում գու, ասաղերի է ծարաւ քո հողին: Սակայն քո վատ հակումներն էլ են ծարաւում ազատութեան:

Քո վայրենի շները ձգտում են ազատուել. նրանք հաշում են հաճոյքից իրենց նկուղսում, երբ քո ոգին բոլոր բանտերի գոները բացել է ջանում:

Դու ինձ համար դեռ բանաարկեալի մէկն ես, որ տենչում է ազատութեան. ախ, շատ է խելօքանում այսպէս բանտարկեալների հոգին, բայց և խորամանկանում ու վատանում:

Պէտք է իրեն մաքրի նաև ողով ազատեա՞ծը. նրա մէջ դեռ շատ բան է մնացել բանտի կնիւտերից ու ցեցերից. պիտի մաքրւի դեռ նրա աչքը:

Այն, ես ճանաչում եմ քո վտանգը: Բայց յանուն իմ սիրոյ և յոյսի երգւեցնում եմ քեզ. դէն մի ձգիր քո յոյսն ու սէրը:

Շատ է ազնիւ քո զգացմունքը և շատ ազնիւ կարծիք ունեն և ուրիշները քո մասին, որոնք սայրացած են քո վրայ և շար հայեացքներ են ուղղում դէպի քեզ: Իմացիր, որ բոլորի ճանապարհին մի Ազնիւ է կանգնած:

Բարիների ճանապարհն էլ մի Ազնիւ է կտրել. և երբ դրանք նրան բարի են անւանում՝ դրանով նրան մի կողմ ձգել են միայն կամենում:

Մի նոր բան է կամենում ստեղծել Ազնիւը և մի նոր առաքինութիւն: Հինն է կամենում Բարին և որ հինը պահպանւի:

Այն շէ սակայն Ազնիւի վտանգը, որ նա բարի կգտնայ, այլ երբ նա յանդուգն, ծաղրող, ոչնչացնող դառնայ:

Ախ, ես ճանաչում եմ շատ ազնիւների, որոնք իրենց ստեղծած յոյսը կորցրին և այժմ անուանարկում են չորս մեծ յոյսերը:

Արդ տպրում են նրանք լսիրշ ու մանր հաճոյքներով և հազիւ միայն միօրեայ նախտակներ ունեն: «Ողի է նաև հեշտանքը» — ասում են. նրանք:

Ու Չարգեցին իրենց ոգու թևերը. արդ սողում է սա
և կրծելով կեղտոտում:

Նախ ուզում էին հերոսներ լինել. այժմ նեշ-
տասերներ են միայն: Ահ ու սարսափ է նրանց
համար հերոսը:

Սակայն յանուն իմ սիրոյ և յոյսի երգւեցնում
եմ քեզ. դէն մի ձգիր հերոսին քո հոգուց. սուրբ
պահիր քո ամենամեծ յոյսը:—

Այսպէս խօսեց Չրադաշտը:

ՄԱՀ ՔԱՐՈՉՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Կան մահ քարոզողներ, և երկիրը լիքն է նրանցով, որոնց պէտք է կեանքից խուսափել քարոզել:

Աւելորդներով լի է երկիրը, փշայել է կեանքը «չատ-չատերի» պատճառով: Թող «յաւիտէնական կեանքով» մոլորեցնեն, ՚հեռացնեն դրանց այս կեանքից:

«Իեղիններ». այսպէս են անւանում մահ քարոզողներին, կամ «սևեր»: Բայց ես կամենում եմ նրանց ձեզ այլ գոյներով էլ ցոյց տալ:

Կան սոսկալիները, որ կրում են իրենց մէջ մի գիշատիչ դադան և այլ ընարութիւն չունեն, բայց եթէ—հաճոյքներ կամ ինքնաձազկումն: Եւ նրանց հաճոյքներն էլ դեռ ինքնաձազկումն են:

Իրանք դեռ մարդ էլ չեն դառել, այս սոսկալիները. թող քարոզեն կեանքից խուսափել և իրենք էլ հեռները դնան:

Կան և հոգով թոքախտաւորներ, հազիւ դեռ ծնած՝ սկսում են մեռնել և ծարաւի են յոգնածութեան ու զրկանքի ուսմունքների:

Նրանք սիրով կամենում են մեռած լինել՝—բարի թող լինի նրանց կամքը: Զոռւշանանք այս մեռածներին արթնացնելուց և այս կենդանի զազաղները փոստելուց:

Նենց որ նրանց մի հիւանդ կամ մի ծեր է սլատանում՝ ասում են նրանք. «կեանքը հերքւած է»:

Սակայն միայն իրենք են հերքւած և նրանց աչքը, որ գոյութեան միայն մի երեսն է տեսնում:

Խոր ախրութեան մէջ ծւարած փափագում են նրանք մանր պատահմունքներին, որոնք մահ են բերում, այսպէս են սողասում նրանք և սեղմում ատամները:

Կամ շաքարեղէն են սւտում ու ծաղրում իրենց երեխայութիւնը. — նրանք կառչում են իրենց կեանքի ցղօտից և ծաղրում են, որ դեռ կառչում են մի ցղօտի:

Նրանց իմաստութիւնը ասում է. «յիմար է նա, ով ապրում է, և որքան յիմար ենք մենք, և այս է ամենայիմար բանը կեանքի»:

«Կեանքը միայն տանջանք է — ասում են ուրիշները և չեն ստում. դէ փորձեցէք վերջ տալ ձեր կեանքին: Աշխատեցէք, որ վերջանայ կեանքը, որ յոև տանջանք է:

Եւ այսպէս թող հնչի ձեր առաքինութեան խօսքը. «դու պէտք է սպանես քո անձը. դու պէտք է նորդ գողանաս քեզ աշխարհից»: —

«Նեշտանքը մեղք է, — ասում են սմանք, որ մահ են քարոզում, — եկէք հեռանանք մի կողմ և զաւակներ չ'ծնենք»:

«Ծնելը տաժանելի բան է, — ասում են միւսները — էլ ինչո՞ւ ծնենք. միայն դժբախտներ ենք ծնում»: Արանք էլ են մահ քարոզողներ:

«Կարեկցութեան կարիք կայ — ասում են երրորդները: Վերցրէք, ինչ ես ունեմ: Վերցրէք, ինչ ես եմ: Այսպիսով կեանքը ինձ աւելի քիչ կկապի իր շնամ:

Եթէ հիմնովին կարեկցողներ լինէին գրանք՝ ի-

ընց մերձաւորների կեանքը կդառնացնէին: Չար լինել—այս կլինէր նրանց իսկական բարութիւնը:

Բայց նրանք կեանքից ազաւել են կամենում. նրանց ինչ, որ ուրիշներին իրենց շղթաներով ու նւէրներով աւելի ամուր են կապում:—

Դուք էլ, որոնց կեանքը բիրտ աշխատանք ու անհանգստութիւն է. մի՞թէ դուք կեանքից շատ չէք ձանձրացել: Մի՞թէ դուք շատ հասուն չէք մահւան քարոզի համար:

Դուք բոլորդ, որոնց համար քաղցը է բիրտ աշխատանքը և նորը, օտարը, հապճեպը,—դուք ձեզ վատ պահեցիք, ձեր աշխատասիրութիւնը փախուսա է և ինքն իրեն մոռանալու կամքը:

Եթէ դուք կեանքին աւելի հաւատայիք՝ շատ չէիք տարւի վայրկեանս: Բայց սպասելու համար բաւականաչափ ըսվանդակութիւն չունէք—նոյն իսկ ծուլութեան համար:

Ամենուրեք լաւում է նրանց ձայնը, որոնք մահ են քարոզում. ու երկիրը լիքն է նրանցով, որոնց պէտք է մահ քարոզել:

Կամ «յաւիտենական կեանք». ինձ համար այդ միլենոյն է. միայն թէ շատ հեռանան այս աշխարհից:

Այսպէս խօսեց Չրադաշար:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՒ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Մենք չենք ուզում, որ մեր լաւագոյն թշնամիները մեզ խնայեն. և ոչ էլ նրանք,—որոնց սիրում ենք սրտի խորքից: Ուրեմն թողէք, որ ճշմարտութիւնն ասեմ ձեզ:

Պատերազմի եղբայրներս. ես սիրում եմ ձեզ սրտիս խորքից. ես ձեր նմանն էի և եմ: Բայց և ձեր լաւագոյն թշնամին եմ: Ուրեմն թողէք, որ ճշմարտութիւնն ասեմ ձեզ:

Ես դիտեմ ձեր սրտի նախանձն ու ատելութիւնը: Նախանձն ու ատելութիւնը չճանաչելու շափ մեծ չէք դուք: Ա՛րդ, ջանացէք բաւական մեծ լինել՝ դրանցից չամաչելու համար:

Եւ եթէ դուք իմացութեան սրբեր լինել չէք կարող, դոնէ գրա ռազմիկները եղէք: Սրանք են այդպիսի սրբութեան ընկերներն ու նախակարապետները:

Շատ զինւորներ եմ նշմարում, կցանկայի շատ ռազմիկներ տեսնել. «Համազգեստ» է կոչւում իրենց հագուստը, բայց՝ ինչ պահւում է դրա տակ թող համաձեւ չլինի:

Պէտք է դուք ինձ համար այնպիսիներ լինէք, որոնց աչքերը թշնամիներ են որոնում—ձեւ թըշնամուն: Իսկ ձեզնից մի քանիսի աչքում հենց առաջին հայեացքից ատելութիւն կայ:

Ձեր թշնամին պէտք է որոնէք և ձեր պատե-
րագմբ պէտք է դուք մղէք, և ձեր մտքերի համար,
եւ եթէ ձեր միտքը ընկճւի, բայց և այնպէս ձեր
ազնութիւնը պէտք է յաղթութիւն աղաղակի:

Դուք պէտք է խաղաղութիւնը սիրէք իբրև մի-
ջոց նոր կուրի: Եւ կարճ խաղաղութիւնը աւելի՛
քան երկարը:

Ոչ աշխատանքի, այլ պայքարի խորհուրդ ևս
տալիս ես ձեզ: Ոչ խաղաղութեան, այլ յաղթանակի
խորհուրդ ևս տալիս ես ձեզ: Թող ձեր աշխատանքը
պայքար լինի, ձեր խաղաղութիւնը — յաղթանակ:

Մարդ կարող է լռել ու հանգիստ նստել, երբ
աղեղ սւ նեաներ ունի, թէ ոչ՝ կշարախօսի կամ
կկուլի: Թող ձեր խաղաղութիւնը յաղթութիւն լինի:

Դուք ասում էք, լաւ գործն է, որ սրբացնում
է նոյն իսկ կոիւր: Իսկ ես ասում եմ ձեզ, լաւ
կոիւն է, որ սրբացնում է ամեն գործ:

Կոիւն ու արիութիւնը աւելի մեծ բաներ են
արել, քան մերձաւորի սէրը: Ոչ թէ ձեր կարեկցու-
թիւնը, այլ ձեր քաջութիւնն է տղատել մինչև ձիւմ
դժբախտացածներին:

«Ի՞նչն է բարի, լաւ», հարցնում էք դուք: Քաջ
լինելն է լաւ: Թող որ փոքրիկ աղջիկները ասեն.
«Բարի, լաւ լինել նշանակում է գեղեցիկ և միաժա-
մանակ յուզիչ լինել»:

Ձեզ անսիրտ կկոչեն. բայց ձեր սիրաւ ճշմա-
րիտ է. և ես սիրում եմ ձեր սիրալիրութեան ամօթը:
Դուք ամաչում էք ձեր մակընթացութիւնից, իսկ
ուրիշները իրենց սեղատութիւնից:

Տղեկ էք դուք. — ապա իւրեմս, իմ եղբայրներ,
ծածկւեցէք ամենավեհագոյն բանով, տղեղութեան
վերարկուով:

Նրբ ձեր հողին մեծանայ. նա խիզախ պիտի լինի, և ձեր վեհութեան մէջ շարութիւն կայ: Ես ճանաչում եմ ձեզ:

Չարութեան մէջ խիզախը հանդիպում է թոյլին: Բայց նրանք իրար չեն ճանաչում: Ես ճանաչում եմ ձեզ:

Պէտք է թշնամիներ ունենաք ատելու համար, բայց ոչ թշնամիներ արհամարհելու համար: Դուք պէտք է հպարտանաք ձեր թշնամիով, որովհետև ձեր թշնամու աջողութիւնները և ձեր աջողութիւններն են:

Ընդվզել—ահա սարկի ազնւութիւնը. ձեր ազնւութիւնը թող հնազանդութիւն լինի: Ձեր հրամաններն իսկ թող հնազանդութիւն լինեն:

Լաւ ուղմիկի համար շուտ պարաւար ետքը աւելի հաճելի է հնչում քան «ես կամենում եմ»-ը: Եւ այն ամենը, ինչ ձեզ համար սիրելի է, պէտք է թողնէք, որ դեռ ձեզ հրամայեն:

Ձեր կեանքի սէրը պէտք է ձեր ամենաբարձր յոյսի սէրը լինի, և ձեր ամենաբարձր յոյսը կեանքի ամենաբարձր միտքը պէտք է լինի:

Իսկ ձեր ամենաբարձր միտքը—թողէք, որ այդ ձեզ հրամայեմ.—մարգս մի բան է, որ պէտք է յաղթահարել:

Այսպէս ապրեցէք ձեր հնազանդութեան ու կուրի կեանքը: Ինչ բան է երկար ապրելը: Ո՞ր ուղմիկը կուզի խնայել:

Ես ձեզ չեմ խնայում, ես սիրում եմ ձեզ սրտիս խորքից—պատերազմի իմ եղբայրներ:

Այսպէս խօսեց Չրագաշար:

ՆՈՐ ԿՈՒՌՔԻ ՄԱՍԻՆ.

Ուր և է կան դեռ ժողովուրդներ ու նախիրներ, բայց ոչ մեզ մօտ, իմ եղբայրներ, այստեղ պետութիւններ կան:

Պետութիւն: Ի՞նչ բան է այս: Ուրեմն՝ լաւ բաց արէք տկաններդ, որովհետեւ պիտի խօսեմ ձեզ հետ ժողովուրդների մահւան մասին:

Պետութիւն է կոչուում բոլոր ստան ճիւղներից ամենաստուր: Ստանատիրտ է նաև ստում նաև նա այս սուտը սողում է նրա բերնից. «Նա, պետութիւնս եմ ժողովուրդը»:

Սուտ է այս: Ստեղծադարձուներն էին, որ ստեղծեցին ժողովուրդներին և նրանց մի սուտն ու ինքնութեանը սեղանը, այսպիսով ծառայեցին նրանք կեանքին:

Ոչնչացնողներ են նրանք, ովքեր խտրաբաններ են դնում «չատերի» համար և այդ պետութիւնն ստեղծում, պրանք մի սուր և հարիւր ցեղայիններն են կախում նրանց վրայից:

Ուր դեռ ժողովուրդ կայ՝ սա չի հասկանում պետութեանը և ստում է սրան իբրև շար աչքի և բարբի ու վարբի գէմ մեղքի:

Այս նշանակն եմ տալիս ձեզ. խեղճանչիւր ժողովուրդ իր շար ու բարբի լեզուն ունի, որ հաշտանը չի հասկանում: Իր յատուկ լեզուն է. ստեղծեց նա բարբ ու վարբի մէջ:

Պետութիւնը սակայն ստում է բարիի ու շարի բոլոր լեզուներով. և ինչ էլ որ խօսում է՝ ստում է—աւ ինչ որ ունի՝ գողացել է նա:

Ամեն ինչ կեղծ է նրա մէջ. գողացած ատամներով է կծում նա, կծանք: Կեղծ է անդամ նրա փորոտիքը:

Չար ու բարիի լեզուները շիտթ. անա ձեզ պետութեան նշանը: Ճշմարիտ, մահ: ան կամք է նշանակում այդ նշանը: Ճշմարիտ, դա կանչում է մահ բարոգոյններին:

Շատ-շատերն են ծնւում, աւելորդներին համար սակեղծեց պետութիւնը:

Տեսէք՝ թէ ինչպէս է նա գէպի իրեն գրաւում «շատ-շատերին». ինչպէս է նա կուլ տալիս գրանց, ինչպէս ծամում ու որոճում:

«Երկրի վրայ աւելի մեծ բան չկայ՝ քան ես. ես Աստուծոյ կարգադրիչ մասն եմ» — այսպէս է մոնչում հրէշը. եւ երկարակամջներն ու կարճատեսները շեն միանցն, որ ծունկ են խոնարհում:

Ա՛խ, նաև ձեր մէջ, ով մեծ հողիներ, իր մութ կեղծիքներն է շնջում նա: Ա՛խ, նա իսկոյն հասկանում է՝ որոնք են հարուստ սրանքը, որ նւիրւում են սիրով:

Այն, ձեզ էլ է նա լաւ ճանաչում և որսում, դուք յաղթողներ հին Աստուծու ԅողներցիք դուք այդ պարբարի մէջ և այժմ ձեր յոգնածութիւնն նոր կուռքին է ծառայում:

Հերոսներ ու պատաւորներ է կամենում նա իր շուրջը ունենալ այդ նոր կուռքը: Սիրով է հանդիշում նա բարի խղճի արևի լոյսի տակ—ստոր հրէշը:

Ամեն ինչ պատրաստ է նա մեզ ստուգ. եթէ

դուք նրան պաշտէք, այդ նոր կուռքը, այդպէս՝ գնում է նա ձեր առաքինութիւնների փայլը և ձեր հպարտ աչքերի հայեացքը:

Ձեզնով կարթել է կամենում նա շատ-շատերին: Այո, դժսխային մի խաղ էր հնարւած դրա համար, մահւան մի ձի, որ թաթոում էր ասուածային պատիւների պաճուճանքների մէջ:

Այո, բոլորի համար մի մահ հնարւեց, որ ինքն իրեն փառարանում է իբրև նոր կեանք. ճշմարիտ որ, մի լաւ ծառայութիւն բոլոր մահ քարոզողների համար:

Պետութիւն եմ անւանում ես այն, ուր բոլորի թոյն խմողներ են—լաւերը թէ վաւերը: Պետութիւն, ուր դանդաղ ինքնասպանութիւնը բոլորի—«կեանք» է կոչւում:

Նայեցէք այս աւելորդներին. դրանք գողանում են հնարողների գործերն ու իմաստունների դանձերը. կրթութիւն են անւանում նրանք իրենց գողութիւնը—և ամեն ինչ նրանց համար հիւանդութիւն է ու անհանգստութիւն:

Նայեցէք այս աւելորդներին. դրանք միշտ էլ հիւանդ են, նրանք փախում են իրենց լեղին և այդ թերթ անւանում: Նրանք կլանում են իրար և մարսել անդամ չեն կարողանում:

Նայեցէք այս աւելորդներին. Հարստութիւններ են դիզւում և դրանով աւելի աղքատանում: Ոյժ և իշխանութիւն են ցանկանում դրանք և Նախ իշխանութեան գործիքը—շաա փող,—այս անկարողները:

Տեսէք, ինչպէս են մազլցում այդ արագոտն կապիկները: Իրանք մազլցում են իրար գլխով ու քաշքշելով ընկնում ցեխի մէջ:

Գահին են ձգտում դրանք բոլորը, դրանց խենթաթիւնն է այդ—կարծես երջանկութիւնն է բազմած գահի վրայ, Յաճախ ցեխն է բազմում գահի վրայ և յաճախ էլ գահը—ցեխի վրայ:

Խենթեր են դրանք բոլորն էլ և մագլցող կայիկներ ու շափաղանց աճապարուզներ: Շատ վատ հոտ ունի ձեր կուսքը, այդ ստոն հրէջը, շատ գէշ հոտ ունին դրանք բոլորը, այդ կոսպաշտները:

Ի՛մ եղբայրներ, մի՛թէ կամենում էք խեղդուել նրանց երախների ու ցանկութիւնների դարշահոտութեան մէջ: Աւելի լաւ է, փշրեցէք պատուհանները և հետեցէք դէպ' սղատութիւն:

Սուսափեցէք վնաս հոտից, հեռու փախէք սւււլորդների կոսպաշտութիւնից:

Սուսափեցէք վնաս հոտից, հեռու փախէք մարդկային գոհերի գոլորշուց:

Ազատ է դեռ երկիրը մեծ հողիների համար: Դատարկ են դեռ մենակեացների ու երկկեացների վայրերը, արօնց շուրջը խաղող ծովերի բոյրն է փշում:

Ազատ է դեռ կեանքը մեծ հողիների համար:— Ճշմարիտ, սվ թիչ ունի՝ նրան էլ թիչ կճնշեն, օրհնելի փոքրիկ ազրատութիւնը:

Այնտեղ, ուր պետութիւնն է վերջանում սկսւում է այն մարդի կեանքը, որ սոււրբ չէ, այստեղ է սկսւում անհրաժեշտի երգը, միանգամ միայն երգւող ու անփոխարինելի եղանակը:

Այնտեղ, ուր պետութիւնն է վերջանում—նայեցէք այն կողմը, ի՛մ եղբայրներ, չէք տեսնում նրան, գերմարդի ծիածանն ու կամուրջները:

Այսպէս թուեց Չրադաշտը:

ՇՈՒԿԱՅԻ ՃԱՆՃԵՐԻ ՄԱՍԻՆ.

Փախիր, լիմ բարեկամ, դէպի քո մենակութիւնը:
Ես անսնամ եմ, քեզ խլացրել է մեծ մարդկանց
աղմուկը և խոցոտել՝ վոքբերի խայթացները:

Անտառն ու ժայռը գիտեն քեզ հետ արժանա-
վայել լռել: Նմանաւոր նորից այն ծառին, որին դու
սիրում ես, լայնաճիւղին. խազաղ ու անդորր կախ-
ւած է նա ծովի վրայ, ասես տկանջ է դնում:

Այնտեղ, սւր մենակութիւնն է վերջանում
սկսում է շուկան. և սուր շուկան է սկսում, այն
տեղ էլ մեծ դերասանների աղմուկն է սկսւում
և բզզիւնը թունաւոր ճանճերի:

Աշխարհում լաւագոյն բաները անարժէք են,
ուանց մէկի, որը ներկայացնում է դրանց. մեծ մա
դիկ է անւանում ժողովուրդը այդ ներկայացնու
ներին:

Ժողովուրդը չի հասկանում մեծին, այսին
ստեղծողին: Բայց նա հասկանում է մեծ գործի
ներկայացնողներին ու դերասաններին:

Նոր արժէքների ստեղծողների շուրջն է դու
նում աշխարհը—ուսումնում է աննկատելի կերպ:
Սակայն դերասանների շուրջն են պտտում ժողո-
վուրդն ու փառքը. այս է ճկարդն աշխարհի:

Ոգի ունի դերասանը, բայց շատ քիչ խիղճ

սղու: Միշտ հաւատաւմ է նա այն բանին, որով նա ամենից շատ է հաւատացնում—հաւատացնում իւեմ:

Վաղը նա մի նոր հաւատ ունի, իսկ հետեւեալ օրը մի այլ հաւատ: Սուր զգայարանքներ ունի նա ժողովուրդի նման և փսիոխական հոտառութիւն:

Յեղաշրջել—ապացուցել է նշանակում նրա մօտ: Անթացնել—համոզել է նշանակում: Ու արիւնը—ապացոյցներից լաւագոյնը:

Այն ճշմարտութիւնը, որ միայն նուրբ ականջներին է հասանելի՝ սուտ և ոչինչ է համարում, որոնք մեծ ազմուկ են հանում աշխարհում:

Հանդիսաւոր խեղկաաակներով լի է շուկան—և ժողովուրդը հպարտանում է իր մեծ մարդկանցով, սրանք են օրւայ հերոսները:

Բոպէն հարկադրում է նրանց, և նրանք էլ հարկադրում են քեզ: Նրանք ուզում են լսել նաև քո այոն կամ ոչը: Վայ քեզ, գու. ուզում ես թեր-ի ու դէմ-ի միջև քո աթոռը պնել:

Այս հարկադրողների և անպայմանների համար մի խանդոաիր, սվ դու ճշմարտութեան սիրահար: Երբէք էլ ճշմարտութիւնը չի կախւել անպայմանի թևից:

Դրանց պատճառով ետ քաշւիր քո ապահով մեծութիւնը. միայն շուկայում են յարձակւում մարդու վրայ այո կամ ոչ պահանջելով:

Դանգաղ են ապրում բոլոր խորունկ աղբիւրները. երկար պէտք է սպասեն սրանք՝ մինչև կիմանան՝ ի՛նչ ընկաւ իրենց խորքը:

Շուկայից ու փառքից մի կողմ է քաշւում, ինչ որ մեծ է. շուկայից ու փառքից մեկուսի են ապրել սկզբից և եթ նոր արժէքներ հնարողները:

Փախիր, իմ բարեկամ, դէպի քո մենութիւնը. տեսնում եմ թէ ինչպէս խոցոտում են քեզ թունաւոր ճանճերը: Փախիր այնահոյ, սւր օդն է դաժան ու խստաշունչ:

Փախիր դէպի քո մենակութիւնը: Դու փոքրերին ու ողորմելիներին շաա մօա էիր ապրում: Փախիր նրանց անտեսանելի վրէժից: Թո դէմ նրանք ոչ այլ ինչ են, բայց եթէ վրէժ:

Ձեռքդ այլ ևս նրանց դէմ մի բարձրացրու: Անթիւ են նրանք, և քս ճակատադիրը չէ ճանճաքշիկ լինել:

Անթիւ են այս մանրերն ու ողորմելիները. և շաա հպարտ շէնքերի խորաակման համար բաւական էին միայն անձրևի կաթիլներն ու մացառները:

Դու քար չես, բայց արդէն մաշւել ես անձրևի կաթիլներից: Շաա կաթիլները քեզ կճայթեցնեն ու կփշրեն:

Տեսնում եմ, որ քեզ յողնեցրել են թունաւոր ճանճերը և հարիւր տեղից արիւն հանել, և քո հրպարտութիւնը զայրանալ անդամ չէ կամենում:

Արիւն են ուզում նրանք քեզնից կատարեալ չքմեղութեամբ, արիւն են անշում նրանց անարիւն հողիները,—և նրանք խայթում են կատարեալ չքմեղութեամբ:

Բայց ո՞վ դու, խորունկ հողի, դու շաա խորն ես տանջում նաև ամենափոքր վէրքերից, և նախ քան դու կբուժւես՝ սողում է նոյն թունաւոր որդը քո ձեռքի վրայով:

Շաա ես հպարտ դու, որպէսզի սպանես այդ քաղցրամոլին. բայց զդաւշացիր, սր քեզ համար ճակատադրական չդառնայ—կրել դրանց սոչ անարդարութիւնը թունաւոր:

Նրանք բզզում են քո շուրջը իրենց գովասանքը.
Նրանց գովասանքը յանգուզն է սւ յամառ.
Նրանք միայն քո մորթի ու արեան մերձութիւնն են
կամենում:

Նրանք շողոքորթում են քեզ ինչպէս մի Ասածու
կամ սատանայի. նրանք ողբում, հեծեծում են քո
առաջ, որպէս մի Աստծու կամ սաաանայի առաջ.
Ի՞նչ արած. շողոքորթներ ու լալկան քսուներ են
դրանք և ոչ աւելի:

Յաճախ էլ նւիրում են քեզ իրլւ սիրալիրներ:
Սակայն այս միայն երկշտաների խելօքութիւնն է:
Այո՛, վախկաաները խելօք են:

Նրանք շատ են մտածում քս մասին իրենց նեղ
հոգիներով—կասկածելի ես երևում միշտ նրանց:
Ի՞նչի մասին մարդ շատ է մտածում՝ կասկածելի է
երևում:

Նրանք պաատում են քեզ քո բոլոր առաքինու-
թիւնների համար: Նրանք սրանց միայն քո վրի-
պումներն են ներում:

Որովհեաւ դու մեղմ ես ու սիրադ արդար ա-
սում ես նրանց. ռանմեղ են նրանք իրենց մանր
գոյութեամբ: Նրանց նեղ հոգին սակայն մտածում
է. «մեղք է միայն մեծ գոյութիւնը»:

Անգամ եթէ նրանց հեա մեղմ ես վարում
նրանք իրենց քեզնից արհամարհած են չդում: Ու
նրանք ես են դարձնում քեզ քո բարեդործութիւնը
գաղտնի շարագործութիւններով:

Ձեր անխօս հպարտութիւնը հակառակ է նրանց
ճաշակին. նրանք ցնծում են, երբ դու այնչափ հա-
մեստ ես, որպէսզի սնաչարծ լինես:

Այն՝ ինչ մենք մէկի մօտ ճանաչում ենք՝ այդ

էլ վառում, բորբոքում ենք նրա մօտ: Ուրեմն զգուշացիր մանր մարդկանցից:

Քո առաջ նրանք իրենց փոքր են զգում և նրանց փոքրութիւնը վառում ու բորբոքում է քեզ ընդդէմ՝ իրրեանասանելի վրէժ:

Չսկասեցիր՝ թէ քանի անդամ նրանք համրացան, երբ մերձեցար նրանց և ինչպէս նրանց ոյժը թողնում էր նրանց, որպէս ծուխը—մարող կրակը:

Այո, իմ քարեկամ, դու քո մերձաւորի շար խիղճն ես: որովհետև նրանք անարժան են քեզ: Ուստի և ատում են քեզ ու սիրով քո արիւնը կծծէին:

Քո մերձաւորները միշտ էլ թունաւոր ճանձեր կլինեն: Այն, ինչ մեծ է քո մէջ՝—հենց այդ կդարձնի նրանց թունաւոր ու ճանձաման:

Փախիր, իմ ընկեր, դէպի քո մենակութիւնը և այնտեղ, ուր օդն է գաժան ու խստաշունչ: Քո ճակատադիրը չէ ճանձաքշիկ լինել:

Այսպէս խօսեց Չրադաշտը:

ԺՈՒԺԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Սիրում եմ անասոր: Քաղաքներում զժլար է
ապրել. այնտեղ կրքոսներ շատ կան:

Աւելի լաւ չէ մարդասպանի ձեռն ընկնել՝ քան
մի կրքոս կնոջ երազի մէջ:

Եւ դիտեցէք այս տղամարդկանց, դրանց աչքերն
ասում են—դրանք աւելի լաւ քան չեն ճանաչում
աշխարհիս վրայ՝ քան մի կնոջ մօտ պառկելը:

Ցեխ է դիզւած նրանց հոգու խորքում, և վայ,
եթէ այդ ցիխը դեռ ոգի ու խելք էլ ունի:

Գոնէ եթէ իրրե կենդանիներ կատարեալ լինէիք:
Սակայն կենդանուն յատուկ է անմեղութիւնը:

Սորհուրդ տամ ձեր զգայարանքներն ու ցանկու-
թիւնները մեռցնել: Սորհուրդ եմ տալիս զգայարանք-
ների ու ցանկութիւնների անմեղութիւնը պահել:

Սորհուրդ տամ ձեզ ժուժկայութեան, բայց ժուժ-
կայութիւնը շատերի համար առաքինութիւն է, շա-
տերի համար էլ համարեա մոլութիւն:

Սրանք ժուժկայում են, բայց շուն-զգայականու-
թիւնն է նայում նախանձով ամեն բանից, ինչ տ-
նում են դրանք:

Իրենց առաքինութեան բարձունքից մինչև ու-
ր ողին՝ հեակում է դրանց այս կենդանին և իր
անհանգստութիւնը:

Եւ ինչպէս շուն-զգայականութիւնը մի կտոր

հողի մուրալ դիտէ, երբ նրան մի կտոր միս են մերժում:

Դուք սիրում էք ողբերգութիւններ և ինչ սիրա է լացացնում. ես սակայն կասկածանքով եմ վերաբերւում ձեր շուն-զղայականութեան:

Ձեր աչքերը դաժան են և մոլի հայեացքով ասնջւողներ էք սրոնում: Ձեր հեշտասիրութիւնը չէ, որ կերպարանափոխել և կարեկցութիւն է կոչւում:

Մի օրինակ էլ բերեմ. քչերը չեն նրանք, որ իրենցից սատանաները հայածել կամենալով՝ իրենք գնացին խոզերի մէջ մասն:

Ում համար ժուժկալութիւնը ծանր բան է, նրան չպէտք է խորհուրդ աւել, որպէսզի այդ դժսխքի ճանապարհ չդառնայ և ցելս ու կիրք հողու համար:

Կեղտոտ բաների մասին եմ խօսում: Այդ չէ ինձ համար ամենավատ բանը:

Իմացութեան ձգտողը սիրով չէ մանում ջուրը, ոչ թէ, երբ ճշմարտութիւնը կեղտոտ է, այլ երբ այդ ծանծաղ է:

Ճշմարիտ եմ ասում, կան իսկապէս ժուժկալ մարդիկ. որանք մեղմ սիրտ ունեն, սրանք աւելի ոիրով և առաա են ծիծաղում քան դուք:

Սրանք ծիծաղում են նոյն իսկ ժուժկալութեան վրայ և հարցնում, «ինչ է ժուժկալութիւնը:

Յիմարութիւն չէ ժուժկալութիւնը: Սակայն այս յիմարութիւնը ինքը եկաւ մեզ մօտ և ոչ մենք նրա:

Մենք ոիրա և տեղ տւինք այդ հիւրին. և նա ապրում է մեզ մօտ,—թնգ մնայ, որքան կուզէ՞:

Այսպէս խօսեց Ջրագաշար:

ԸՆԿԵՐՈՋ ՄԱՍԻՆ.

«Մէկը միշտ աւելորդ է իմ շուրջը—այսպէս է մտածում մենտկետը: «Շարունակ մէկ-անդամ-մէկ — ժամանակի ընթացքում կդառնայ երկու»:

Եսն ու «Ինձը» շատ եռանդուն են խօսակցութեան մէջ. ինչպէս կարելի է ասնել, եթէ մի ընկեր չլինէր:

Մենակեացի համար ընկերը երրորդ անձնաւորութիւնն է. երրորդը այն խցանն է, որ արդելում է երկսի խօսակցութեան շատ խորը իջնելու:

Ախ, շատ խորութիւններ կան բոլոր մենակեացիների համար: Ուստի և նրանք այնպէս կարօտում են մի ընկերի և նրա բարձրութեան:

Մեր հաւաար դէպի ուրիշները մատնում է՝ թէ մենք մեր ինչին սիրով հաւաար կուզէինք: Մեր ընկերոջ կարօար մեր մասնիչն է:

Եւ յաճախ սիրով մարդ նախանձն է միայն ծածկել կամենում: Եւ յաճախ էլ յարձակում ենք և թշնամի ստեղծում, որպէսզի ծածկենք, որ մեզ վրայ յարձակել պէտք էր:

«Եղիբ դոնէ իմ թշնամին»—այսպէս է խօսում ճշմարիտ ակնածութիւնը, որ չի համարձակում բարեկամութիւն խնդրել:

Եթէ բարեկամ ենք ուզում ունենալ՝ պէտք է

րա համար էլ կռիւ մղել կամենանք. իսկ կռիւ դելու համար պէտք է թշնամի լինել կարողանալ:

Պէտք է բարեկամի մէջ մեր թշնամուն յարեմք: Կարմղ ես շաա մօռեհուլ բարեկամիդ, առանց րա կողմն անցնելու:

Իր բարեկամի մէջ մարդ իր ամենալաւ թշնամին պէտք է ունենայ: Դու պէտք է նրան սրտով ամենից մօտ լինես, երբ հակառակում ես նրան:

Դու կամենում ես քո բարեկամի տուաջ դիմակ չդնել: Քո բարեկամի համար մի մեծ պատիւ է, որ դու նրան յայտնուում ես, ինչպէս, որ կաս: Բայց դրա համար նա կուզի, որ քեզ սատանան տանի:

Ո՛վ իրեն չի ուզում թաղցնել, գայրանում է. ահա՛ ձեր հիմքը մերկութիւնից վախենալու: Եթէ ասաւածներից պաշապանուում էք՝ պէտք է որ ամաչէք և ձեր շորերից:

Դու չես կարող քո բարեկամի համար հարկաւոր չափով գեղեցիկ զարդարուել, որովհետև պէտք է նրա համար մի նեա ու Գերմարդի կարօաը լինես:

Տեսել ես բարեկամիդ քնած, — որ իմանաս թէ ինչպէս է նրա դէմքը: Ուրիշ ի՞նչ բան է բարեկամիդ դէմքը. այդ քո սեփական դէմքն է մի կողմու ու անկատար հայելու մէջ:

Տեսել ես բարեկամիդ քնած. չսարսափեցիր նրա դէմքից. օ, իմ բարեկամ, մարդս մի բան է, որին պէտք է յողթհարել, դէպի վեր բարձրացնել:

Լռելեայն հասկանալու և տեղին լռելու մէջ ընկերը պէտք է վարպետ լինի, ամեն բան չպէտք է անել: Ե, կամենա: Երազում պէտք է անենո՞ թէ ինչ է անում ընկերդ արթուն ժամանակ:

Թող միաքը հասկանալ լինի քո կարեկցանքը,

որ դու նախ խմանաս, արդե՞ծք, ընկերդ Կամենսմ
է կարեկցեւի Քերես սիրում է նա քո մէջ աննկուն
աչքդ ու յախտենակումս թեան հայեացքդ:

Բարեկամիդ կարեկցիլը թաղցրու մի հաստ կե-
զի տակ, որ մի ատամ կտարես դրա վրայ: Այսպի-
սով միայն կզգաս դրա նրբութիւնն ու քաղցրու-
թիւնը:

Արդե՞ծք, դու մարութ օդ, մենակութիւն, հաց
ու գարման հս քո ընկերոջ համար: Ամանք անկա-
րող են իրենց սեփական շղթաները քակելու, բայց
ընկերոջ համար փրկիչ են հանգիստանում:

Քու սարմէկ ես՝ ապա անկարող ես ընկեր վի-
նելու: Քու բռնակալ ես՝ ապա չես կարող ընկեր ու-
նենայ:

Նրկար մամանակից ի վեր կնոջ մէջ մի սարուկ
ու մի բռնակալ էին թագնամու: Աւտի և կինը ան-
բնդունակ է ընկերութեան, նա միայն սէքն է ճա-
նաչում:

Կնոջ սիրոյ մէջ անարդարութիւնն ու կտրու-
թիւնն կայ բնդուէմ այն ումենի, ինչ նա չի սիրում:
Անպատ կնոջ գիտակից սիրոյ մէջ սիրոյ կողքին յար-
ձակումն, կայծակն ու դիշերն են խշտում:

Անբնդունակ է կինը դեռ ընկերութեան. կա-
տունը են կանայք ու թոշուններս կամ՝ յաւաղայն
գէպրում կովի:

Անբնդունակ է կինը դեռ ընկերութեան: Սա-
կայն ատաղէք ինձ, սփ ապամարդիկ, ձեզնից ձվ է
բնդունակ ընկերութեան:

Օ՛, ձեր անանկութիւնը, սփ ապամարդիկ և ճշա-
տութիւնը ձեր հողիներին: Արքան որ դուք ձեր բա-
րեկամին էք ապրի՛ս՝ այդ նոյնը կատմ ես իմ իշնա-
մուն և պրանով երբէք էլ չեմ աղքատանայ:

Թոյ ձեր ընկերութիւնը բարեկամութիւն լինի:

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Շատ երկիրներ տեսաւ Զրադաշար և շատ ժողովուրդներ. ու շատ ժողովուրդների լաւն ու վատը, չարն ու բարին գաաւ: Աւելի մեծ այժ չգտաւ Զրադաշար երկրի վրայ՝ քան չարն ու բարին:

Զի կարող ապրել մի ժողովուրդ, որ գնահատել չդիտէ. բայց եթէ կամենում է նա իր դոյութիւնը պահպանել՝ չպէտք է այնպէս գնահատի՝ ինչպէս իր հարեանը:

Շատ բան, ինչ մի ժողովուրդի համար բարի էր՝ ծաղր ու ծանակ էր միւսի համար: Ահա իմ դիտողութիւնը: Շատ բան ես այստեղ տեսայ շարանւանելիս, իսկ այնտեղ ծիրանեգոյն պաախւներով զարգարւած:

Երբէք մի հարեան միւսին չհասկացաւ. յաճախ զարմացած մնաց նրա հողին հարեանի խենթութեան ու չարութեան վրայ:

Արժէքների մի տախտակ կայ կախում իւրաքանչիւր ժողովուրդի վրայից: Տե՛ս, այդ նրա յաղթահարումների աախաակն է. տես, այդ նրա իշխելու կամքի ձայնն է:

Գովական է նրա համար, ինչ ծանր է. ինչ անհրաժեշտ է ու ծանր՝—բարի է. իսկ ինչ գերագոյն կարիքից ազատում է նրան, հազւագիւտն ու ծոնրադոյնը—այդ սուրբ է յայտարարում:

Ինչ իրեն սցնում է յայլևելայ, սիրելիս ու
 վառյելիս, սարսափ ու նախանձ պատճառում իր հա-
 բեանին՝ այդ է նրա համար բարձր, աստճինը, բա-
 ռը իրերի չափն ու խնամար:

Ճշմարիտ, իմ եզրայր, միտչն մի երկրի կարի-
 քը, երկիրը, երկինքն ու հաշիւանից ճանաչելով կր-
 հասկանաա նրա յայլմահարսւմեերի օրէնքը և ին-
 ինչն է նա այս աստիճանով դէպի իր յոյսը ձգտում:

«Միշտ պէտք է աստճինը լինես և միսներին
 դերպոսնեցիս Մչ սրի չպէտք է սիրի քո խանդոս
 ողին, անգամ ընկերոջդ» այս ցնցում էր յոյնի
 հոպին, այսպէս էր գնում նա իր մեծաթեան շախմատ

«Ճշմարտութիւնը ասել և լա նետ ու օղեզ
 դարձածել» — այս էր ամենատիրելի ու ծանր բանը
 այն մտղովորդի համար, որից իմ անունն է ծաղում
 — իմ անունը, սր ինձ համար հաստատարայլ, սիրելի
 է ու ծանր:

«Պատուիր հօրդ ու մօրդ և մինչ հայտն խորքի
 հնարանդ ելիր նրանց», յայլմահարման այս ասխ-
 տանն է կախել իր վրայից մի այլ մտղովորդ, սր
 հօր ու յախտեհնական դարձաւ զրանով:

«Հաւատարիմ մնայ և յանուն հաստատարմութեան
 իր պատիւն ու արիւնք դնել անգամ շտք ու վտան-
 դաւոր բաների համար», այս բարոյելով ընկճեց ի-
 ընն մի այլ ժողովուրդ, ու այսպէս ընկճելով յղու-
 ցաւ ու ծանրացաւ մեծ յոյսերով:

Ճշմարիտ, ժողովուրդները իրենք աւելին իրենց
 շարն ու բարին: Ճշմարիտ, նրանք այդ չընդունե-
 ցին, նրանք այդ չղաան, այդ չեկաւ նրանց համար
 որպէս երկնքի ձայն:

Արժէքներ է գնում մարդս իրերի մէջ իր զոյս:

թիւնը պահպանելու համար, — նա ստեղծեց իրերի իմասար, մի մարդկային իմաստ. ուստի և իրեն «մարդ» է անուանում, — այսինքն գնահատող:

Գնահատումն ստեղծումն է. լսեցէք, ով ստեղծողներ: Գնահատումն ինքը բոլոր գնահատւած իրերի գանձն ու գոհարեղէնն է:

Գնահատելով է միայն արժէք ստեղծւում. ու առանց գնահատման գոյութեան ընկոյզը փուչ կլինէր: Լաւ լսեցէք, ով ստեղծողներ:

Արժէքների փոփոխութիւն — ստեղծագործների փոփոխութիւն է նշանակում: Միշտ խորտակում է նա, ով ստեղծագործ պէտք է լինի:

Սկզբում ժողովուրդներն էին ստեղծագործ և միայն յետոյ այդ անհատները գարձան: Ճշմարիտ, անհատըն ինքը գեռ ամենանոր ստեղծագործութիւնն է:

Ժողովուրդները երբեմն բարիի մի տախտակ կախեցին իրենց վրայից: Իշխել ու հնազանդել կամեցող սէրերն էին, որ միասին այսպիսի տախտակներ ստեղծեցին:

Սէրը առ նախիրը տւելի հին է՝ քան սէրը առ եսը. և քանի գեռ բարի խիղճը նախիր է կոչւում՝ միայն վատ խիղճն է, որ ասում է — Ես:

Ճշմարիտ, խորամանկ եսը, անսէրը, որ իր շահը շատերի շահի մէջ է որոնում. այս նախիրի ծագումը չէ, այլ նրա անկումն:

Սիրողներ էին ու ստեղծագործներ, որ ստեղծեցին չարն ու բարին: Սիրոյ հուրն է բորբոքւում բոլոր առաքինութիւնների մէջ և բարկութեան հուրը:

Շատ երկրներ տեսաւ Զրագաշտը ու շատ ժողովուրդներ. տւելի մեծ ոյժ չգտաւ Զրագաշտը տշխարհում, քան սիրողների գործերը. «չար» ու «բարի» է դրանց անունը:

Ճշմարիտ, մի հրէշ է այս գովք ու պարսաւան-
քի ոյժը: Ասացէք, ո՞վ կընկճի դրան, իմ եղբայրներ:
Ասացէք, ո՞վ կձգի կապանքները այս կենդանու հա-
զարաւոր ծոծրակներին:

Հազարաւոր նպատակներ կային մինչ այժմ,
որովհետեւ հազարաւոր ժողովուրդներ կային: Հազա-
րաւոր ծոծրակների կապանքն է պակսում դեռ, պակ-
սում է մի նպատակը: Մարդկութիւնը գեռ նպատ-
ակ չունի:

Ասացէք սակայն, իմ եղբայրներ, եթէ մարդ-
կութիւնը գեռ նպատակ չունի՝ գոյութիւն ունի՞ ինքը:

Այսպէս խօսեց Զրադաշտը:

ՄԵՐՁԱԻՈՐԻ ՍԻՐ ՈՅ ՄԱՍԻՆ.

Դուք մղոււմ էք դէպի մերձաւորը և գրաւ համար գեղեցիկ խօսքեր ունէք: Բայց ես ձեզ ասոււմ եմ. ձեր սէրը դէպի մերձաւորը ձեր ամենապատ սէրն է դէպի ձեզ:

Դուք գէպի մերձաւորն էք փախչոււմ հենց ձեզնից և դրանից ուզոււմ էք մի առաքինութիւն ստեղծել. բայց ես թախանցոււմ եմ մաքով ձեր ճեսագուրկը».

Դուն աւելի հին է քան Ես. Դուն սուրբ է յայտարարուած, իսկ Եսը դեռ ոչ. ուստի և մարդ մղոււմ է դէպի մերձաւորը.

Խորհուրդ տամ ձեզ մերձաւորի՞ սիրոյ. աւելի լաւ է ձեզ մերձաւորից փախուստի և հեռաւորի սիրոյ խրատ տամ:

Մերձաւորի սիրուց աւելի բարձր է սէրը գէպի հեռաւորն ու ապագայինը: Դէպի մարդը տածած սիրուց ինձ համար աւելի բարձր է սէրը դէպի իրերն ու ուրաւականները:

Այս ուրաւականը, որ վաղոււմ է քո ետեից, իմ եղբայր, աւելի գեղեցիկ է քան դու. ինչո՞ւ չես տալիս նրան քո միտն ու ոսկորները: Բայց դու վախենոււմ ես քեզնից ու դէպի քո մերձաւորը փախչոււմ:

Դուք ձեզ տանել չէք կարողանոււմ և չէք սի-

լում ձեզ բաւականաչափ, ուստի ուզում էք սիրով մոլորեցնել ձեր մերձաւորին և նրա սխալանքով ձեզ ոսկեգօծել:

Ես կցանկայի, որ դուք տանել չկարողանայիք ամեն տեսակ մերձաւորների ու սրանց հարևաններին. այսպիսով ստիպւած կլինէիք գուք հենց ձեզնից ձեր բարեկամն ու իր սիրառատ սիրալ ստեղծել:

Դուք մի վկայ էք կանչում, երբ ձեր մասին լաւ խօսել էք կամենում. և երբ նրան մոլորեցրել էք՝ ձեր մասին լաւ մտածելու, ինքներդ արդէն լաւ էք մտածում ձեր մասին:

Ստում է ոչ միայն նա, ով հակառակ իր իմացածի է խօսում, այլ մանաւանդ նա, ով հակառակ իր շիմացածի է խօսում: Իսկ այսպէս էք խօսում դուք ձեր մասին յարաբերութեան մէջ և խաբում ձեզ հետ և ձեր հարևանին:

Այսպէս է խօսում յիմարը. «մարդկանց հետ յարաբերութիւնը փշացնում է բնաւորութիւնը, մանաւանդ եթէ մարդ բնաւորութիւն չ'ունի»:

Մէկը գնում է մերձաւորի մօտ, որովհետև իրեն է որոնում, և միւսը, — որովհետև իրեն կորցնել է կամենում: Ձեր դէպի ձեզ տածած վատ սէրն է ձեր մենակութիւնը բանտ դարձնում:

Հեռաւորներն են, որ վճարում են ձեր սէրը դէպի մերձաւորը. և երբ հինգ հոգի միասին են՝ պէտք է միշտ մի վեցերորդը մեռնի:

Ես չեմ սիրում նաև ձեր տօները. շատ գերասաններ են դրանց մասնակցում և հանգիսականներն անգամ դերասան են ձեանում:

Ոչ թէ մերձաւոր, այլ բարեկամ-ընկեր ունենալ եմ ձեզ քարոզում: Բարեկամ-ընկերը թող ձեր երկրի տօնը լինի և Գերմարդի նախազգացմունքը:

Ես քարոզում եմ ձեզ ընկեր-բարեկամ և նրա սիրազեզ սիրտը: Բայց պէտք է հասկանալ՝ սպունգ լինել, երբ մարդ սիրտզեղ սրախց սիրւել է կամենում:

Ես քարոզում եմ ձեզ այնպիսի ընկեր-բարեկամ, որի մէջ պտտրաստ է աշխարհը, բարիի անօթ,— ստեղծագործ բարեկամ, որ միշտ մի պատրաստ աշխարհ նւիրել կարող է:

Եւ ինչպէս որ աշխարհը նրա նամար դիւրութեամբ բաժանւեց իրարից՝ այդպէս էլ կազմում է օղակ-օղակ միանալով, ինչպէս գոյանում, լինում է բարին շտրի միջոցով, ինչպէս ստեղծում է նպատակը պտտահանութիւնից:

Ապագան և հեռաւորը թող լինեն քո այսօրի պատճառը. քո բարեկամի մէջ պէտք է սիրես Գերմարգին իրրև քո պատճառին:

Ի՛մ եղբայրներ, մերձաւորի սիրոյ խորհուրդ չեմ տալիս, ես ձեզ խորհուրդ եմ տալիս Հեռաւորի Սիրոյ:

Այսպէս խօսեց Չրագաշտը:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԱՍԻՆ.

Կամեննում ես դու, իմ եղբայր, մեկուստնալ.
Կամեննում ես գնալ այն ճանապարհով, որ դէպի քեզ
է տանում: Տատանւիր սակու-ինչ ու ինձ լսիր:

«Ո՛վ որոնում է՝ դիւրութեամբ կորչում է ինքը:
Մեկուսացումն յանցանք է». այսպէս է խօսում նա-
խիրը: Եւ դու երկար ժամանակ նախիրի թւին էիր
պատկանում:

Նախիրի ձայնը դեռ կհնչի նաև քո մէջ երկար
ժամանակ: Ու երբ դու ասես. «ես ձեզ հետ ընդ-
հանուր ոչինչ չունեմ ոչ էլ մի խիղճ»--այդ մի ողբ
ու ցաւ կգառնայ:

Տես, հենց այդ ցաւը սաեզծեց մի խիղճը. և
այս խղճի վերջին փայլն է վառւում դեռ քո տխրու-
թեան վրայ:

Բայց դու կամեննում ես գնալ քո տխրութեան
ճանապարհով, որ դէպի քեզ տանող ճանապարհն է:
Ապա ցոյց տուր ինձ, որ իրաւունք և ոյժ ունիս
դրա համար:

Արգեօք, դու մի նոր ոյժ և իրաւունք ես: Մի
առաջին շարժում, մի ինքնազլոր անիւ, կարող ևս
նաև աստղերին հարկադրել, որ պտտեն քո շուրջը:

Ա՛խ, դեռ շատ ցանկասէր տենչանք կայ դէպի
բարձունքները, այնքան շատ ջղտձգութիւններ կան

փտուասէրների: Յոյց տուր, սր փտուամտներից ու
ցանկասէրներից չես:

Ախ, դեռ շատ մեծ մտքեր կան, սրոնք փութսի
դեր են կատարում. գրանք փչում, ուռցնում են ու
աւելի դատարկացնում:

Ազատ ես համարում ինքզ քեզ. քո տիրող
միտքն եմ լսել կամենում և ոչ թէ, որ գու ազատ-
ւել եո մի լծից:

Դու այնպիսի մէկն ես, որը մի լծից ազատւելու
իրաւունք ունենար: Կան մարգիկ, որոնք իրենց վեր-
ջին արժէքն են դէն ձգում, երբ իրենց ծառայելու
ընդունակութիւնն են դէն ձգում:

Ազատ ինչից: Սա ինչ Զրադաշտին: Պայծառ
պիտի վկայի քո աչքը—ազատ ինչու համար:

Կարճ ես ինքզ քո չարն ու բարին որոշել. և
կամքդ որդէս մի օրէնք կախել քո վրայից: Կարճ
ես քո օրէնքի դատաւորն ու դատախազը լինել:

Սոսկալի բան է մենակ մնալը իր սեփական
օրէնքի դատաւորի ու դատախազի հետ: Այսպիսով
մի աստղ է նետւում ամայի տարածութեան ու մե-
նակութեան սառցային շնչի մէջ:

Այսօր տանջւում ես դու շատերի պատճառով,
նվ մենակ հոգի: Այսօր գեռ պահել ես քո արիու-
թիւնն ու քո յոյսերը:

Բայց մի օր կյոզնեցնի քեզ մենակութիւնը, մի
օր կկոտրւի քո հպարտութիւնը ու կխորտակւի քո
արիութիւնը: Մի օր կգոչես դու—«ես մենակ եմ»:

Մի օր չես տեսնի այլ ևս քո գերագոյնը և շատ
մօտ կտեսնես—քո ստորնագոյնը: Քո վսեմագոյնն
անդամ կվախեցնի քեզ որպէս մի ուրւական: Մի
օր կգոչես գու. «ամեն ինչ կեղծ է»:

Կան գղացմունքներ, որոնք սպանել են կամենում մենակին. իսկ եթէ այդ չեն աջողում նրանք՝ իրենք սլիախ մեռնեն: Բայց կարող ես գուսճրագործ լինել:

Ճանաչում ես գու, իմ եզրայր, «տաեւութիւն» խօսքը և քս տրդարտդատաութեան տանջանքը՝ տրգար վարւել տյնպիսիների հետ, սրոնք աաում են քեզ:

Հարկագրում ես շտտերին այլ կերպ մատծել քո մտտին. նրանք այդ չեն մոռանում և ծանր վրէժ են նիւթում: Դու նրանց շտտ մօտեցար, բայց և տնցար տնտարրեր. այդ նրանք քեզ երբէք չեն ների:

Դաւ տնցար նրանցից վեր. ստկայն սրքտն աւելի ես գաւ բարձրանում՝ այնքտն աւելի փոքր է տեսնում քեզ նախտնճի տչքը: Ամենից շտտ սակայն թռչողին են ատում:

«Ինչպէս կկտմենայիք գուք ինձ հետ արգար վարւել» — պիտի տեսս գաւ. — ես ընարում, ընգաւնում եմ ձեր անարգտրութիւնը իրրև ինձ հասանելիք բաժին»:

Անտրգարութիւն ու ցեխ են ձգում նրանք մենակի հասցէին: Սակայն, իմ եզրայր, եթէ գու մի աատղ լինել ես կամենում պէտք է նրանց էլ հտտտար լուսաւորես:

Եւ գգաւշտցիր բարիներից սւ տրգարներից. սրանք խաշում են սիրով նրանց, ովքեր իրենց սեփական առաքինութիւնն են հնարում, — գրտնք աաում են մենակին:

Ձգուշտցիր նոյնպէս սմւրք միամտութիւնից: Ամեն ինչ անսաւրք է գրտնց համար՝ ինչ միտմիտ ու պարզուենակ չէ. դա խաղում է սիրով և կրակի հետ — խտրոյկի:

Զգուշացիր նաև քս սիրայ կրկնուող պսոթկում-
ներից: Շատ շուտով է մենակը ձեռք պարզում նը-
րան, ով հանդիպում է իրեն:

Շատ մարդկանց ձեռք չպէտք է տաս, այլ մի-
այն թաթ. և ես կցտնկայի, որ քո թաթը ճիրաններ
էլ ունենար:

Բայց տմենավատթար թշնամին, որին գու
հանդիպել կարող ես, միշտ էլ կլինես գու երբևէ
ինքդ: Դու ինքդ ես գարնամուտ սպասում քեզ տն-
առաներում ու ձարերում:

Ո՛վ գու մենակ, որ գնում ես գէպի քեզ տա-
նող ճանապարհով. հենց քո մտից կանցնի ճանա-
պարհդ և քո եօթ սատանաների մտից:

Ինքդ քո հերձուածողը կլինես և՛ վհուկ և՛ գու-
շակ, և՛ խեղկատակ, և՛ կասկածող, և՛ անսուրբ, և՛
չարտգործ:

Կփորձես այրել քեզ քո սեփական բոցերի մէջ.
Ինչպէս պիտի նորտնաս, եթէ նախ մոխիր չես գա-
ռել:

Ո՛վ գու մենակ, գու գնամ ես ստեղծագործի
ճանապարհով. գու սիրում ես ինքդ քեզ, ուստի և
արհամարհում ես ինքդ քեզ, սրպէս միայն սիրող-
ներն են արհամարհում:

Ստեղծագործել է կամենում սիրողը, որովհետև
նա արհամարհում է: Ի՞նչ է հասկանում նա սիրուց,
ով ստիպւած չի եղել արհամարհելու այն, ինչ սի-
րում է ինքը:

Քո արցունքներով գնա մեկուսացիր քեզ հա-
մար, իմ եղբայր: Ես սիրում եմ նրան, ով իրեն
գերազանցող մի բան է ստեղծել կամենում ու խոր-
տակում այսպիսով:

Այսպէս խօսեց Զրադաշար:

ԾԵՐ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ.

«Ի՞նչ ես գազաագողի տնցնում մթնշաղին, Ջրագաշտ: Եւ ի՞նչ ես զգաւշութեամբ պահում վերարկաւիգ տակ:

«Իտ մի՞ գանձ է, որ նւիրել են քեզ. թէ՛ արդէն ինքզ ես հիմտ գնում գողերի ճանտպարհով, գնւ շտրերի բտրեկամ»:—

Ճշմարիտ, իմ եւբայր, խօսեց Ջրագաշտը, սա մի գանձ է, որ տարգեել են ինձ. մի փոքրիկ ճըշմարտութիւն է տյս, որ ես տանում եմ:

Բայց գա աղեզ սւ անգուսպ է որպէս նորածին մանուկը, և եթէ չրոնեմ գրա բերանը՝ բարձր կըճչայ:

Երբ ես այսօր մենտկ գնում էի իմ ճանապարհով այն ժամին, երբ տրեր թեքւում է՝ ինձ մի պառտւ պտտահեց ու տյսպէս խօսեց իմ սրաի հետ:

«Շտտ բտնի մտսին խօսեց Ջրագաշտը նաև մեզ՝ կանտնց հեա, սակտյն երբէք չխօսեց կնոջ մասին»:

Եւ ես պտտասխանեցի նրան. «կանտնց մտսին տղամարգկանց հետ պէտք է խօսել»:

«Ինձ հեա էլ խօսիր կնոջ մասին, սասաց նա. ես բաւական ծեր եմ և իսկոյն կմոռանամ»:

Ես զիջեցի պտռուին ու տյսպէս խօսեցի նրա հետ:

Ամեն ինչ կնոջ մէջ առեղծւած է և ամեն ինչ կնոջ մէջ մի լուծումն ունի՝—այդ յղիութիւն է կոչւում:

Տղամարդը կնոջ համար միջոց է միայն, նպատակը միշտ էլ դաւանն է: Բայց ինչ է կինը աղամարդի համար:

Երկու քան է կամենում իսկական տղամարդը— վտանգ և խաղ: Իրա համար էլ կամենում է կնոջը, որպէս ամենավտանգաւոր խաղալիքի:

Տղամարդը պէտք է կրթւի ուղմի համար և կինը ուղմիկի կազդուրման համար, մնացած բոլորը յիմարութիւն է:

Չափազանց քաղցր պտուղներ—այդ չի սիրում ուղմիկը: Ուստի և կամենում է նա կնոջը, դառն է անգամ ամենաքաղցր կինը:

Աւելի լաւ քան աղամարդը՝ հասկանում է կինը երեխաներին, բայց տղամարդը աւելի է մանկական քան կինը:

Իսկական տղամարդի մէջ թաքնւած է մի մանուկ, սա խաղալ է ցանկանում: Ապա, ով կանայք, դաէք տղամարդի մէջ մանուկը:

Մի խաղալիք է կինը, մաքուր ու նուրբ՝ որպէս գահար, լուսաշող մի աշխարհի առաքինութիւններով, որ դեռ դոյութիւն չունի:

Թող մի աստղի լոյսը փայլի ձեր սիրոյ մէջ: Թող ձեր յոյսը կոչւի, ճբաղձանքս է,—ծնել Գերմարդին»:

Թող արիութիւն լինի ձեր սիրոյ մէջ: Ձեր սիրով լէտք է յարձակէք նրա վրայ, ով ձեզ երկիւղ է ներշնչում:

Ձեր սիրոյ մէջ թող լինի ձեր պատիւը: Այլա-

պէս շատ քիչ բան է հասկանում կինը պատուից: Եւ այս թո՛ղ լինի ձեր պատիւը. միշտ տւելի սիրել՝ քան դուք սիրւում էք և երբէք երկրորդը չլինել:

Թո՛ղ վախենայ տղամարդը կնոջից, երբ սա սիրում է. սա ամեն ինչ կգոհաբերի. մնացած բոլոր բաները անարժէք են նրա համար:

Թո՛ղ վախենայ տղամարդը կնոջից, երբ սա ասում է որովհետև տղամարդը իր հոգու խորքում միայն չար է, կինը սակայն—վատ:

Ո՛ւր է ասում կինը ամենից շատ.—Այսպէս սասց երկաթը մագնիսին. «ես քեզ ամենից շատ եմ ասում, որովհետև դու ձգում ես, բայց այնքան զօրեղ չես, որ քեզ քաշես»:

Տղամարդի, երջանկութիւնն ասում է. ես կամենում եմ. կնոջ երջանկութիւնը—նա կամենում է:

«Տես, հենց հիմա աշխարհը կատարեալ էր»,—այսպէս է մտածում կինը, երբ նա իր ամբողջ սիրով է հնազանդւում:

Կինը պէտք է հնազանդւի ու իր մակերևոյթային գոյութեան խորունկութիւն առայ: Մակերևոյթային է կնոջ հոգին, մի շարժուն փոթորկւող երես ծանծաղ ջրերի:

Սորն է սակայն տղամարդի հոգին, ոտորերկրային խոռոչներում է, կարկաչում նրա հոսանքը, կինը կռահում է նրա ոյժը, բայց չի հասկանում:—

Այս խօսքից յետոյ պատասխանեց ինձ պառաւ կինը. «Շատ խելօք բաներ ասաց Ձրադուշարը և անսովոր նրանց համար, որոնք դեռ շատ են երիտասարդ այդ մտքերի համար:

Տարօրինակ բան է, Ձրադուշարը կանանց քիչ է ձանաչում, բայց և իրաւացի է նրանց վերաբեր-

մամբ, մի՞թէ այդ նրանից է, որ կնոջ համար անկարելի բան չկայ:

Իսկ այժմ ընդունիր իբրև շնորհակալութիւն մի փոքրիկ ճշմարտութիւն. իմ հասակը իրաւունք է տալիս ինձ այդ ասելու:

Լաւ փաթաթիր ու բերանն էլ փակիր, թէ ոչ բարձրաձայն կգոռայ դա, այդ փոքրիկ ճշմարտութիւնը»:

«Տնւր ինձ, կին, քս փոքրիկ ճշմարտութիւնը», ասացի ես. ու այսպէս խօսեց պառաւ կինը:

«Գնո՞ւմ ես կնոջ մօտ՝ մի մոռացիր մտրակը»:—

Այսպէս խօսեց Զրադաշար:



ԻԺԻ ԽԱՅԹՈՑԻ ՄԱՍԻՆ.

Մի օր Ջրադաշար քնել էր մի թղենու տակ, որովհետև օրը շատ տաք էր, և ձեռներով ծածկել էրեսը. այդ ժամանակ մի իժ եկաւ և այնպէս խայթեց նրա վիզը, որ Ջրադաշար ցաւից վեր թաւու ձշաց, Երբ նա ձեռքը երեսից վերցրեց՝ նայեց օձին, օձը ճանաչեց Ջրադաշտի աչքերը, ետ դարձաւ ու կամենում էր հեռանալ. «Ո՛չ, ասաց Ջրադաշտը. դու ինձ ճիշտ ժամանակին արթնացրիր, իմ ճանապարհը դեռ երկար է»։ «Քո ճանապարհը կտրճ է», ասաց իժը տխրազին. «Իմ թոյնը սպանում է»։ Ջրադաշտը ժպտաց. «Երբ ես տեսել, որ վիշապը մեռնի օձի թոյնից», ասաց նա. Բայց յետ ընդունիր քո թոյնը. դու այնքան հարուստ չես, որ այդ տաս ինձ»։ Այդ ժամանակ իժը, կրկին ընկաւ նրա վզով ու լիզեց նրա վերքը։

Երբ մի տնգամ Ջրադաշտը պտտմեց այդ դէպքը իր աշակերտներին՝ սրանք հարցրին. «Իսկ որն է, ո՞վ Ջրադաշտ, քո պատմութեան բարոյականը»։ Ջրադաշտը այսպէս պատասխանեց դրան։

Բարոյականութեան խորտակող են անւանում ինձ բարիներն ու արդարները. իմ պատմութիւնը անբարոյական է։

Եթէ դուք սակայն մի թշնամի ունէք՝ նրա չա-

լուծիւնը բարութեամբ մի հատուցէք, զրանով կամաչեցնէք նրան. այլ ապացուցէք, որ նա ձեզ մի լաւ բան է արել:

Եւ աւելի լաւ է բարկանաք՝ քան թէ ամաչեցնէք: Եւ երբ ձեզ անիծում են՝ չեմ սիրում, երբ դուք օրհնել էք կամենում: Աւելի լաւ է մի բիշ միասին անիծել:

Եւ եթէ ձեզ մի մեծ անարդարութիւն են արել՝ հինգ փոքրերն էլ դուք արէք հապճեպ: Սոսկալի բան է տեսնել նրան, որին միայն ճնշում է անարդարութիւնը:

Գիտէի՞ք. այս արդէն, բաժանւած անարդարութիւնն ու անիրաւութիւնը կէս իրաւունք է: Եւ նա պէտք է իր վրայ վերցնի անարդարութիւնը, ով այդ կրել կարող է:

Մի փոքրիկ վրէժ--աւելի մարդկային է՝ քան ոչ մի վրէժ: Եւ եթէ պատիժն էլ մի իրաւունք ու մի պատիւ չէ օրինադանցի համար՝ ապա չեմ ուզում ես ձեր պատիժները:

Աւելի ազնիւ բան է, անիրաւացի համարել իրեն քան իրաւացի, մանաւանդ երբ մարդ իրաւացի է: Միայն թէ դրա համար պէտք է «հարուստ» լինել բաւականին:

Ես չեմ կամենում ձեր սառն արդարութիւնը. և ձեր դատաւորների աչքից միշտ էլ միայն դահիճն ու իր սառն երկաթն են նայում:

Ասացէք, ո՞ւր է այն արդարութիւնը, որ մի սէր է սրատես աչքերով:

Ուրեմն՝ նախ ստեղծեցէք այն սէրը, որը ոչ միայն բոլոր պատիժները, այլ և բոլոր մեղքը իր վրայ է վերցնում:

Ուրեմն՝ նախ ստեղծեցէք այն արդարութիւնը, որ արդարացնում է իւրաքանչիւրին՝ ի բաց առեալ գատողին:

Մի բան էլ էք կամենում ինձնից լսել. նա, ով բացարձակ արդար է կամենում լինել, նրա մօտ սուսան էլ մարդասիրութիւն է դառնում:

Բայց ինչպէս կարելի է բացարձակ արդար լինել: Ինչպէս կարող եմ իւրաքանչիւրին իրենը ատլաբաւական է, որ ես իւրաքանչիւրին ասամ իմը:

Վերջապէս իմ եղբայրներ, զգուշացէք բոլոր մենակեացների հետ անայ, որ վարւելուց: Ինչպէս կարող է մենակեացը մոռանալ. ինչպէս կարող է նա հատուցանել:

Մենակեացը նման է խոր ջրհորի. շատ հեշտ բան է նրա մէջ քար ձգելը. բայց երբ այդ մինչև խորքը համնի, ասացէք, ով կհանի այդ նորից:

Զգուշացէք մենակեացին վիրաւորելուց. իսկ, եթէ վիրաւորել էք՝ լաւ է, որ սպանէք էլ:

Այսպէս խօսեց Զրադաշտը:

ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԱՒԱԿԻ ՄԱՍԻՆ.

Ես մի հարց ունեմ: Ի՞նչն քեզ համար, եմ եղ-
րայր. որպէս մի կապար ձգում եմ ետ այդ հարցը
քո հոգու մէջ, որ իմանամ, որքան խորն է այդ:

Ի՞նչ երիտասարդ ես և ամուսնանալ ու զաւակ
ունենալ ես ցանկանում: Սակայն հարցնում եմ ես
քեզ. դու նրանցից ես, որ զաւակ ունենալու իրա-
ւունք ունենաս:

Ի՞նչ յաղթականն ես, ինքն իրեն յաղթահարողը,
զգայարանքներին ու բնագոյներին հրամայողը, քո
ստաքինութիւնների տէրը: Այս եմ հարցնում քեզ:

Թէ՛ քո ցանկութիւններից կենդանին է խօսում
և կարիքը. թէ՛ մենակութիւնը. թերևս քեզնից դժ-
գոհութիւնը:

Ես կկամենայի, որ քո յաղթութիւնն ու ազա-
տութիւնը ձգաէին զաւակը: Կենդանի արձանների
պէտք է կանդնեցնես դու քո յաղթութեան և ազա-
տագրութեան:

Քեզնից դէպ վեր պէտք է կառուցես Բայց
նախ ինքդ պէտք է լաւ կազմեա՞ծ լինես ուղղան-
կիւն հոգով ու մարմնով:

Ոչ միայն պէտք է շարունակես սերունդդ, այլ
բարձրացնես, ազնուացնես: Իրա մէջ թող պնդի քեզ
ամուսնութեանն պարտէզը:

Մի բարձր մարմին պէտք է ստեղծես դու, մի առաջին շարժում, մի ինքնազուր անիւ,—մի ստեղծադործ պէտք է ստեղծես:

Ամուսնութիւն—այսպէս եմ անւանում ես երկսի կամքը՝ ստեղծելու մէկ նորը, որ աւելին է՝ քան իրեն ստեղծողները: Իրարից ակնածանք եմ անւանում ես ամուսնութիւնը—այսպիսի կամքով կամեցողների փոխադարձ ակնածանքը:

Այս թող լինի քո ամուսնութեան իմաստն ու ճշմարտութիւնը: Իսկ այն, ինչ շատ-շատերը ամուսնութիւն են անւանում, այդ աւելորդները,—ուես, ինչպէս որակեմ ես այդ:

Ա՛հ, հոգիների այդ ազգասութիւնը երկսով: Ա՛հ, հոգիների այդ կեղտոտութիւնը երկսով: Ա՛հ, այս ողորմելի հաճոյականութիւնը երկսով:

Ամուսնութիւն են անւանում նրանք այս ամենը և ասում, որ իրենց ամուսնութիւնը երկնքում է կնքւած: Իսկ ես չեմ ցանկանում այդ, աւելորդների այդ երկինքը: Ո՛չ, ես չեմ ցանկանում դրանց, երկնային ցանցի մէջ խճճւած այդ անասուններին:

Թող հեռու մնայ ինձնից և այն Աստուածը, որ կաղալով իջնում է օրհնելու այն, ինչ ինքը չէ միայրել:

Մի ծիծաղէք այս ամուսնութիւնների վրայ: Ո՛ր պաւակը հիմք չունի իր ծնողների վրայ լալու:

Շատ արժանաւոր էր երևում այս տղամարդը և հասուն երկրի իմաստի համար, բայց երբ ես նրա կինը տեսայ՝ աշխարհը ինձ խելագարների մի տուն թւաց:

Այո, ես կկամենայի, որ երկիրը սառանւէր ջրածրութիւնից, երբ մի սուրբ և մի սաղ միանում են իրար հետ:

Այս մէկը իբրև հերոս որսի ելաւ ճշմարտութեան և ի վերջոյ մի փոքրիկ պաճուճեալ սուտ որսաց: Իր ամուսնութիւնս է անւանում նա այդ:

Միւսը երկչոտ էր իր յարաբերութեան մէջ ու մեծ զգուշութեամբ էր ընտրում: Բայց ահա միանգամից փշացրեց նա իր ընկերութիւնը, իր ամուսնութիւնն է նա անւանում այդ:

Միւսն էլ մի «աղախին»—կին էր փնտրում հրեշտակի առաքինութիւններով, բայց յանկարծ ինքը մի կնոջ աղախինը դարձաւ. և այն էր պակաս, որ դրանից յետոյ նա հրեշտակ դառնար:

Շատ հոգատար տեսայ բոլոր գնողներին, և բոլորն էլ խորամանկ աչքեր ունեն: Սակայն ամենախորամանկն անգամ իր կինը քսակի մէջ է դնում:

Մի շարք կարճ յիմարութիւններ—ահա՛ ձեր սէրը: Եւ ձեր ամուսնութիւնը վերջ է տալիս բոլոր կարճ յիմարութիւններին իբրև մի երկար յիմարութիւն:

Ձեր սէրը դէպի կինը և կնոջ սէրը դէպի աղամարդը, ահ, երանի թէ կարեկցանք լինէին դրանք, կարեկցանք դէպի տանջւող ու թաքնւած ասուածները: Սակայն մեծ մասամբ երկու անասուններ են դոնում իրար:

Սակայն ձեր լաւագոյն սէրն անգամ մի հիանալի պատկեր է և մի ցաւադին հուր-աենչանք: Մի ջահ է դա, որ ձեզ դէպի նոր ճանապարհներ պէտք է լուսաւորի:

Ձեզնից վեր պէտք է սիրէք մի ժամանակ: Արդ սովաւեցէ՛ք նախ սիրել: Իսկ դրա համար պէտք է ձեր սիրոյ դառն բաժակը խմէք:

Դառնութիւն կայ նաև ամենալաւ սիրոյ բաժա-

կում. այդպէս նա Գերմարդի կարօտն է սուաջաց-
նում. այդպէս ծարաւեցնում է նա քեզ, ստեղծա-
գործողիդ:

Ծարան—ստեղծագործողիդ, նեւ ու կարօտ—
Գերմարդի. ստան, իմ եղբայր, այս է քո ամուսնա-
նալու ցանկութիւնը:

Սուրբ է ինձ համար այդպիսի կամքն ու ստուս-
նութիւնը:

Այսպէս խօսեց Զրադաշտը:

ԱԶՍՏ ՄԱՀԻԱՆ ՄԱՍԻՆ.

Շատերը շատ ուշ են մեռնում և ոմանք էլ—
շատ վաղ: Դեռ օտարոտի է հնչում այս խօսքը.
«մեռիր ճիշտ ժամանակին»:

Մեռիր ճիշտ ժամանակին, այսպէս է քարո-
զում Զրադաշտը:

Իհարկէ, ո՛վ բնաւ չի ապրել ճիշտ ժամանակին՝
ինչպէ՛ս կարող է նա ճիշտ ժամանակին մեռնել: Լաւ
էր, որ երբէք չծնէր:—Այսպէս եմ խորհուրդ տա-
լիս ես աւելորդներին:

Ոսկայն աւելորդներն անգամ մեծ կարևորու-
թիւն են տալիս իրենց մահւան ու ամենապիտուկ ըն-
կոյզն անգամ դեռ կտարւել է կամենում:

Շատ մեծ նշանակութիւն են տալիս բոլորը
մահւան. մահը սակայն դեռ մի տօնահանդէս չէ:
Մարդիկ դեռ չեն սովորել՝ թէ ինչպէ՛ս պէտք է
սրբագործել ամենագեղ՝... է տօները:

Ի կատար ածող մահն եմ ցոյց տալիս ես ձեզ,
որ ապրողների համար մի խթան և մի ուխտ է
դառնում:

Իր մահով է մեռնում ի կատար ածողը, յաղ-
թական, շրջապատւած յուսացողներով ու ուխտեայ-
ներով:

Ուրեմն՝ պէտք է մեռնել սովորել. ոչ մի տօն
չպիտի գոյութիւն ունենայ, ուր այսպէս մի մեռ-
նող ապրողներին երդում չտար:

Այսպէս մեռնելը ամենալաւ բանն է. երկրորդ
մնն է սակայն. մեռնել պայքարի դաշտում և մի
ինձ հողի նւիրել:

Սակայն պայքարողի՝ ինչպէս նաև յաղթողի հա-
մար՝ հաւասար ասելի է ձեր քրքջող մահը, որ մո-
տենում է դադտադողի, որպէս դող—բայց և դալիս
գրգէս տէր:

Իմ մահն եմ գովաբանում ես ձեզ, ազապ մա-
շը, որ դալիս է ինձ համար, որովհետև ես եմ կա-
մենում այդ:

Իսկ երբ պէտք է ես այդ կամենամ.—Ո՞վ մի
նպատակ ունի և մի ժառանգ՝ նա մահ է կամենում
ճիշտ ժամանակին իր նպատակի ու ժառանգի համար:

Եւ նպատակի ու ժառանգի ակնածանքից կեանքի
տաճարում նա շար պատկենք չի կախի:

Ճշմարիտ, պարան մանողներին նմանել չեմ
կամենում. դրանք քաշում են իրենց թելերը և միշտ
ետ-ետ գնում:

Ոմանք շատ են ծեր իրենց ճշմարտութիւնների
ու յաղթութիւնների համար. անատամ ըերանը տմեն
ճշմարտութեան համար այլ ևս իրաւունք չունի:

Եւ ո՞վ փառքի արժանանալ է կամենում՝ պէտք
է ժամանակին հրաժեշտ ասյ պատւին և վարժւի
ճիշտ ժամանակին... գնալու դժւարին արւեստի մէջ:

Պէտք է չթողնել իրեն ատել, երբ մարդ ամե-
նից համեղն է. այս գիտեն նրանք, ո՞վքեր երկար են
սիրւել կամենում:

Թթու խնձորներ կան իհարկէ, որոնց ճակատա-
դիրն է—մինչև աշնան վերջին օրերը սպասել և
դառնալ հասուն, դեղին ու խորշամետ:

Ոմանց սիրան է շատ ծերանում, ոմանց էլ

ողին: Ոմանք էլ ծեր են երիտասարդութեան ժամանակ. երաժարդասցողը սակայն երկար է երիտասարդ մնում:

Շատերին ճախողում է կեանքը. մի թուճաւոր որդ կրծում է նրանց սիրտը. թնդ այդպիսին աշխատի, որ մեռնելն իրեն աջողի:

Ոմանք երբէք չեն քաղցրանում. դրանք փառւմ են դեռ ամառը: Երկշտութիւնն է միայն դրանց իրենց ճիւղին պինդ պահում:

Շատ-շատերը ապրում են և երկար ժամանակ կախւած մնում իրենց ճիւղերից: Ա՛հ, եթէ մի մորիկ բարձրանար ու այս բոլոր փառձն ու որդակերը թափէր ծառից:

Ա՛հ, եթէ արագ մահ քարոզողներ գային: Դրանք կլինէին ինձ համար ամենախոկական մրրիկներն ու կեանքի ծառը թափահարողները: Սակայն ես լսում եմ, որ միայն դանդաղ մահ են քարոզում և համբերութիւն բոլոր «երկրաւորի» նկատմամբ:

Ա՛հ, դուք համբերութիւն էք քարոզում երկրաւորի նկատմամբ: Այդ երկրաւորն է, որ ձեզ այդչափ համբերում է, ո՞վ ամբատամուտներ:

Ճշմարիտ, շատ շուտ մեռաւ այն երբայեցին որին փառաբանում են դանդաղ մահ քարոզողները. և շատերի համար նրա շուտ մեռնելը ճակատագրական դարձաւ:

Դեռ միայն երբայեցու արցունքներն ու տիրութիւնը—և արդարների ու բարիների ատելութիւնն էր ճանաչում,—երբայեցի Յիսուսը, երբ յանկարծ տիրեց նրան մահւան կարօտը:

Երանի թէ նա անապատում մնար և բարիներից ու արդարներից հեռու: Թեքս նա սովորէր ապրել սիրել երկիրը ու ծիծաղել:

Հաւատացէք ինձ, իմ եղբայրներ, շատ վաղ մեռաւ նա. նա ինքը ետ կվերցնէր իր վարդապետութիւնը, եթէ նա իմ հասակին հասնէր. դրա համար նա բաւական ազնիւ էր:

Բայց նա դեռ հասուն չէր: Հասուն չէ պատանու սէրը և հասուն չէ նաև նրա մարդուն ու աշխարհ ատելը: Կաշկանդաժ ու ծանր են դեռ. նրա սիրան ու ոգու թևերը:

Բայց տղամարդի մէջ մանուկը աւելի ուժեղ է քան պատանու մէջ և թախիժն էլ քիչ է. նա աւելի լաւ է հասկանում ապրելն ու մեռնելը:

Ազատ մահւան համար և ազատ մահւան մէջ, մի սրբազան բացասող, «ոչ» ասող, երբ «այո» ասելու ժամանակ չկայ. այսպէս է նա հասկանում կեանքն ու մահը:

Որ ձեր մահը մարդի և երկրի արաատորումն չլինի, իմ բարեկամներ, այս եմ խնդրում ես ձեր հոգու մեղրից:

Թող ձեր մահւան մէջ դեռ ձեր ոգին ու ձեր առաքինութիւնը վառւի, որպէս վերջալոյսն է հրավառում երկրի շուրջը. այլպէս ձախողել է ձեր մահը:

Արդ՝ կամենում եմ ես ինքս մեռնել, որ դուք, իմ բարեկամներ, ինձ համար երկիրը աւելի սիրէք: Եւ նորից հող եմ ուզում դառնալ, որ ես հանգչեմ նրա մէջ, որ ծնեց ինձ:

Ճշմարիտ, մի նպատակ ունէր Զրադաշտը. նա ձգեց իր գնդակը. և դուք, իմ բարեկամներ, իմ նպատակի ժառանգութիւնն էք, ձեզ եմ ձգում ես ոսկէ գնդակը:

Աւելի սիրով տեսնում եմ ձեզ, իմ բարեկամներ, ոսկէ գնդակ խաղալիս՝ քան մնացած բոլոր բաները: Իրա համար էլ դեռ մի քիչ դեգերում եմ երկրի վրայ. ներեցէք ինձ:

Այսպէս խօսեց Զրադաշտը:

ԲԱՇԽՈՂ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

1.

Երբ Ջրագաշտը մնաս բարև սասց քաղաքին, որին իր սիրար կպել էր և որ կոչւում էր «խայտաբղէտ կով»—հետևեցին նրան շատերը, որ իրենց նրա աշակերտներն էին համարում և ուղեկցում նրան: Այսպէս հասան նրանք մի խաչ-ճանապարհի. այստեղ սասց նրանց Ջրագաշտը, որ ինքը այսուհետև մենակ է ուղում գնալ, որովհետև նա մենակ գնալու բարեկամ է: Նրա աշակերտները սակայն մի փայտ տւին նրան, որի ոսկէ կոթին մի օձ էր գալարում դէպի արևը: Ջրագաշտը ուրախացաւ փայտի համար, յենեց դրա վրայ և սալա այսպէս խօսեց իր աշակերտներին հետ:

Ասացէք խնդրեմ, ի՞նչպէս ոսկին այսպիսի բարձր արժէք ստացաւ: Նրա համար, որ այդ սչ-սովորական է ու անօգուտ և շողշողուն ու մեղմ իր փայլը՝ դա բաշխում է իրեն շարունակ:

Միայն իբրև ամենաբարձր առաքինութեան սլաակեր՝ ոսկին բարձր արժէք ստացաւ: Ոսկեման է յայտում հայեացքը բաշխողի: Ոսկեփայլն է խաղաղութիւն կնքում արևի ու լուսնի մէջ:

Ոչ-սովորական է բարձրագոյն առաքինութիւնը և անօգուտ, շողշողուն է նա և մեղմ իր փայլը:

բաշխող առաքինութիւն է բարձրագոյն առաքինութիւնը:

Ճշմարիտ, ես հասկանում եմ ձեր միտքը, իմ աշակերտներ. դուք էլ ինձ նման բաշխող առաքինութեան էք ձգտում: Ի՞նչ ունէիք կաաւունքի ու գայլերի հետ ընդհանուր:

Անձ ձեր ծարաւը—ինքներդ էլ դոհեր ու նւէրներ դառնալ. ուստի և ծարաւ էք բոլոր հարստութիւնները ձեր հոգու մէջ դիդելու:

Անյագօրէն գանձերի ու գոհարների է ձգտում ձեր հոգին, որովհետեւ անյագ է ձեր հոգին բաշխել կամենալու մէջ:

Դուք դէպի ձեզ և ձեր մէջ էք քաշում բոլոր իրերը, որպէսզի դրանք ձեր աղբիւրից յեա քաշելով արտահոսուեն որպէս ձեր սիրոյ պարզեաներ:

Ճշմարիտ, բոլոր արմէքների յափշտակիչ պիտի լինի այսպիսի բաշխող սէրը. բայց առողջ ուսուրբ է ինձ համար այսպիսի եսասիրութիւնը:

Մի այլ եսասիրութիւն էլ կայ, մի շտիպողանց աղքատ, մի քաղցող եսասիրութիւն, որ միշտ գողանալ է ուղում, հիւանդների այն եսասիրութիւնը, հիւանդոտ եսասիրութիւնը:

Գողի աչքով է նայում դա ամեն փայլուն բանի վրայ. քաղցի մոլութեամբ է դիտում նրան, ով առատ ուտելու բան ունի. և միշտ սողում է դողունի՝ բաշխողի սեղանի շուրջը:

Հիւանդութիւնն է խօսում այսպիսի մոլութեան միջից և անտեսանելի այլասերումն. հիւժւած մարմնից է խօսում այս եսասիրութեան գող-մոլութիւնը:

Ասացէք ինձ, իմ եղբայրներ, ո՞րն է մեզ համար ամենապատ ու ամենապատիւար բանը. Այլապէս

բուսիք չէ՞ այդ.—Եւ այլսերման Լնք հանդիպո՛ւ՛ միշտ, ուր բաշխուի հոգին է պակասում:

Իէսլ՝ վեր է գնում մեր ճանապարհը—տեսակից վեր՝ դէպի գեր-տեսակը: Բայց սոսկումն է մեզ համար այլասերած միտքը, որ ասում է. «Ամեն ինչ ինձ համար»:

Իէսլ՝ վեր Լն թռչում մեր միտքն ու կամքը. մեր մարմնի պատկերն է այս, բարձրացման պատկերը: Այսպիսի բարձրացումների պատկերներն են առաքինութիւնների սնունդները:

Այսպէս է անցնում մարմինը պատմութեան միջով՝ իբրև լինող-նորոգւող և իբրև մարտիկ: Իսկ ոգին—հինչ է այս նրա համար. նրա պայքարների ու յաղթանակների մունետիկը, ընկերակիցն ու արձագանքը:

Փոխաբերական պատկերներ են Չարի ու Բարիի սնունդները. դրանք ոչինչ չեն ասում, ակնարկում են միայն: Յիմար է, ո՞վ դրանց մասին աւելին է ուզում իմանալ:

Ուշադիր եղէք, իմ եղբայրներ, այն ժամին, երբ ձեր հոգին պատկերներով կխօսի՝ այլտեղ է ձեր առաքինութեան սկիզբն ու ծագումը:

Այդ ընդէին բարձրանում, վեհանում է ձեր մարմինը և յարութիւն առնում. իր բերկրանքով հիացնում է հոգուն, որ սա ստեղծագործող լինի և արժէքաւորող ու սիրող և բոլոր իրերի բարեպարծը:

Երբ ձեր սիրտը լեցւի ու լայնանայ՝ հեղեղի հման՝ իբրև օրհնութիւն ու վտանգ զրկիցների համար՝ այլտեղ է սկիզբը ձեր առաքինութեան:

Երբ դուք վեր լինէք գովքից ու պարսաւից և

ձեր կամքը հրամայէ բոլոր իրերին իբրև մի սիրողի կամք՝—այդտեղ է սկիզբը ձեր առաքինութեան:

Երբ գուք ատէք հաճելին ու փափուկ անկողինը և փափկակեացներից ըստ հնարաւորին հեռու պառկէք՝—այդտեղ է սկիզբը ձեր առաքինութեան:

Եթէ գուք մի կամքով կամեցողներ էք, և եթէ բոլոր կարիքների այս անհրաժեշտ փոխումը ձեզ համար կարիք ու անհրաժեշտութիւն է՝—այդտեղ է սկիզբը ձեր առաքինութեան:

Ճշմարիտ եմ ասում, մի նոր «բարի» ու «չար» է այդ ճշմարիտ, մի նոր խորունկ խոխոջիւն և մի նոր աղբիւրի ձայն:

Ոյժ և իշխանութիւն է այս նոր առաքինութիւնը. մի իշխող միտք է այդ և գրա շուրջը—մի խելօք հոգի. մի ոսկէ արև և նրա շուրջը իմացութեան օձը:

2.

Այստեղ լռեց Զրադաշտը մի քիչ և սիրով նայեց իր աշակերտներին. Ապա շարունակեց այսպէս.—և նրա ձայնը փոխւել էր:

Մնացէք երկրին հաւատարիմ, իմ եղբայրներ, ձեր առաքինութեան ամբողջ ուժով: Ձեր բաշխող սէրն ու ձեր իմացութիւնը թող ծառայեն երկրի իմաստին: Այսպէս եմ խնդրում ու երդեցնում ձեզ:

Մի թողէք որ դրանք խուսափեն երկրայինից և թևերը յաւիտենական պատերին գարնեն. Ա՛խ, մինչև այժմ այնքան խուսափող առաքինութիւն է եղել:

Ետ բերէք, ինձ պէս, խուսափած առաքինութիւնը գէպի երկիր—այն, ետ՝ գէպի մարմինն ու

կեանքը, որ երկրին իր իմաստը տայ—մի մարդկայի՛ն իմաստ:

Հարիւրաւոր ձեւերով խուռտփել ու մալորել են մինչև այժմ ողին ու առաքինութիւնը: Ա՛խ, մեր մարմնի մէջ են դեռ տարում այս բալոր ցնորքներն ու մալորութիւնները. մարմին ու կամք են գարձել այդանդ:

Հարիւրաւոր անգամ փորձել, սխալել ու վրիպել են ողին ու առաքինութիւնը: Այն, մարգը մի փորձ էր: Ա՛խ, սրչափ տգիտութիւն ու մալորութիւն են մեր մէջ մարմին գարձել:

Ո՛չ միայն հաղարամեակների բանականութիւնը այլ և նրանց խենթութիւնն է յայտնւում մեր մէջ, որպէս հին հիւանդութիւն: Վտանգաւոր է ժառանգ լինելը:

Դեռ պայքարում ենք քայլ առ քայլ պատահականութիւն կոչւած հսկայի հետ, և ողջ մարդկութեան վրայ իշխում էր մինչև այժմ յիմարութիւնը, Ան-մտութիւնը:

Ձեր ողին ու առաքինութիւնը թող ծառայեն երկրի իմաստին— իմ եղբայրներ. և բոլոր իրերի արժէքը նորից գուք սուէք: Դրա համար պէտք է մտրտիկներ լինէք: Դրա համար պէտք է ստեղծագործողներ լինէք:

Իմանալով է մաքրւում մարմինը. իմացութեամբ փորձելով է գտ ազնւանում. իմացութեան ձգաողի համար սուրբ են բոլոր մղումներն ու հակումները: Ուրախ, դւարթ է ազնւացածի հոգին:

Իժիշկ, բժշկիր անձդ. զբանով օգնում, բրժկում ես և քո հիւանդին: Այս թող լինի քո ամենա-

լաւ օղնութիւնը, որ նա իր աչքերով տեսնի նրան, ով ինքն իրեն է բժշկում:

Հազարաւոր շաւիղներ կան, որոնցով գեռ ոչ ոք չի գնացել, հազարաւոր տոսղջութիւններ կան և թաքուն կղզիներ կեանքի: Չսպառւած ու չգտնւած են գեռ մարդն ու մաքդկային Աշխարհը:

Արթնացէք և ուշադիր եղէք, ով մենակներ: Ապագայից դէպի մեզ հովեր են փչում ու խփում գողարիկ թևերով, և բարի աւետիքը հասնում է նուրբ ականջներին:

Դուք այսօրւայ մենակներ, ով վտարեալներ, գուք պէտք է մի ժամանակ մի ամբողջ ժողովուրդ կազմէք. ձեզնից, գուք որ ինքներդ ձեզ ընարեցիք, ձեզնից պէտք է մի ընտիր ժողովուրդ մեծանայ. — և սրանից — Գերմարզը:

Ճշմարիտ եմ ասում, մի սիրուն բուժավայր պիտի դառնայ երկիրը. և արդէն նոր բուրմունք է գալիս դրանից, մի փրկարար բուրմունք, — և մի նոր Յոյս:

3.

Երբ Զրտդաշտը այս խօսքերն ասաց, լռեց ինչպէս լռում է մէկը, որ իր վերջին խօսքը չէ ասել, երկար կշռեց նա կասկածով փայտը իր ձեռքում: Վերջապէս խօսեց այսպէս. — և նրա ձայնը փոխւել էր:

Արդ գնում եմ մենակ, իմ աշակերտների: Դուք էլ հեռացէք ինձնից և գնացէք մենակ: Այսպէս եմ կամենում ես:

Ճշմարիտ եմ ասում, հեռացէք ինձնից և սլաշտ:

պանւեցէք Ջրադաշաից: Եւ աւելի ճիշար. ամաչեցէք նրանից: Թերևս նա ձեզ խաբեց:

Իմացութեան մարդը ոչ միայն պէտք է իր թշնամիներին սիրել, այլ և իր բարեկամներին ատել կարողանայ:

Շատ վատ ենք վարձատրում մեր ուսուցչին, երբ միշտ և միայն նրա աշակերան ենք մնում: Եւ ինչո՞ւ չէք ուզում խլել իմ պսակը:

Դուք ինձ փառաբանում էք. իսկ եթէ մի օր՝ ձեր փառաբանութիւնը խորասկզի՞. զդուշացէք, որ չսպանւէք մի սիւնարձանից:

Դուք ասում էք, հաւատում էք Ջրադաշաին: Բայց ի՞նչ է Ջրադաշար: Դուք իմ հաւատացեալներն էք. բայց ի՞նչ են բոլոր հաւատացեալները:

Դուք ձեզ դեռ չէիք որոնել, որ գաաք ինձ: Այդպէս են անում բոլոր հաւատացողները. դրա համար էլ այնքան անարժէք է դարձել հաւատը:

Արդ, պաաւիրում եմ ձեզ—ինձ կորցնել և ձեզ պահել. և միայն, երբ բոլորդ ինձ ուրացած կլինէք՝ կվերադառնամ ձեզ մօտ:

Ճշմարիտն եմ ասում, իմ եղբայրներ, այլ աչքերով պիտի որոնեմ այն ժամանակ իմ կորուսեալներին, մի այլ սիրով պէտք է սիրեմ ձեզ:

Եւ դեռ մի ժամանակից յետոյ էլ իմ բարեկամները պիտի դառնաք և Չաւակները Մի Յայսի. ապա երբորդ անդամ ձեզ մօտ կլինեմ՝ մեծ Միջօրէն ձեզ հեա տօնելու:

Իսկ այն է մեծ միջօրէն, երբ մարդը իր ճանապարհի կիսին կենդանու և Գերմարդի մէջ տեղ կը կանգնի և իր դէպի երեկոն տանող ուղին իրրև իր

ամենարարձր յսյսը կտօնի. որովհետև այդ ճանապարհն է մի նոր առաւօտի:

Իրանից յետոյ ընկնող-անցնողը ինքն իրեն կ'օրհնի, որ ինքը անցնող-բարձրացող է. և նրա իմացութեան արհը կկանգնի միջօրէին:

«Մեռած են բոլոր աստածները. արդ կամե՛նանք, որ Գերմարդն ապրի» — այս թող լինի մեծ Միջօրէլն մեր վերջին կամքը: —

Այսպէս խօսեց Չրադաշտը:

Վ Ր Ի Պ Ա Ն Ա

Քրքիս ապագրութեան ու սրբագրութեան աննպաստ պայմանների պատճառով սպրդել են մի քանի սխալներ, որոնցից հնարատրութիւն ունեւմ միայն հետեւեալների վրայ մատնանշելու.

| | Մեկ, | | Մեյր, | Հ |
|-----------------|--------|-------|-----------|-----------------|
| երկրի ազը | եր. 7, | 2 և 3 | առց ցածից | երկրի իմաստ |
| զոհանակութիւն | — » 8, | 8 | » » | զոհունակութիւն |
| սակաւապետութիւն | » 9, | 4 | » » | սակաւապետութիւն |
| զոհանակութիւն | » 15, | 2 | » վերեից | զոհանակութիւն |
| յետեից | » 16, | 10 | » » | յետեից |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

| | Երես |
|-------------------------------------------------------------|-----------|
| Ջրադաճի նախաբանը | 3— 24 |
| Գերմարդի և վերջին մարդի մասին | 26 — 29 |
| Ջրադաճի նառերը | 30 — 33 |
| Երեք կերպարանափոխութիւնների մասին | 34 — 38 |
| Առաքինութեան ամբիոնների մասին | 39 — 41 |
| Հանդերձեալ կեանք ու աշխարհ քարոզող- ների մասին | 42 — 44 |
| Մարմինը արհամարհողների մասին | 45 — 48 |
| Բերկրանքների ու տանջանքների մասին | 49 — 51 |
| Դժգոյն ոճրագործի մասին | 52 — 56 |
| Կարդալու և գրելու մասին | 57 — 59 |
| Լեռան վրայի ծառի մասին | 60 — 62 |
| Մահ քարոզողների մասին | 63 — 66 |
| Պատերազմի ու ռազմիկների մասին | 67 — 71 |
| Նոր կուռքի մասին | 72 — 73 |
| Շուկայի ճանճերի մասին | 74 — 76 |
| Փուժկարութեան մասին | 77 — 80 |
| Ընկերոջ մասին | 81 — 83 |
| Հազար ու մի նալատակների մասին | 84 — 87 |
| Մերձաւորի սիրոյ մասին | 88 — 91 |
| Սանդաղործողի ճանապարհի մասին | 92 — 94 |
| Մեր ու երիտասարդ կանանց մասին | 95 — 98 |
| Իժի խայթոցի մասին | 99 — 102 |
| Ամուսնութեան և զազակի մասին | 103 — 110 |
| Ազատ մահւան մասին | |
| Բաշխող առաքինութեան մասին | |



Հանձնված է շարվածքի՝
20. 11. 90. Ֆորմատ 60
տպագրական № 1. Հրատ.
10.000. Հրատ. № 1037